

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Համար թիվ 0991/3-4

Տիպ Հրահանգ

Ակտի տիպ Պաշտոնական Ինկորպորացիա (25.04.1996-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ 1995/6

Ընդունող մարմին ՀՀ հարկային պետական տեսչություն

Ընդունման ամսաթիվ 11.04.1995

Ստորագրման ամսաթիվ 11.04.1995

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 11.04.1995

Հաստատված է
**ՀՀ հարկային պետական
տեսչության կողմից**

11. 04.95թ.
թիվ 0991/3-4

Համաձայնեցված է՝
**ՀՀ ֆինանսների
նախարարության հետ**

11. 04.95թ.
թիվ 3-15/2

ՀՀ արդարադատության
նախարարության հետ

11. 04.95թ.
թիվ 1-10

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը հրապարակվում է ի կատարումն «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և կարգավորում է եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը:

2. Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողներ են հանդիսանում.

ա) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող ֆիզիկական անձինք, անկախ եկամտի ստացման աղբյուրներից:

Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող ֆիզիկական անձինք են համարվում նրանք, ովքեր օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գտնվում են ավելի քան 183 օր.

բ) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն չունեցող ֆիզիկական անձինք, եթե նրանք եկամուտներ են ստանում Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից:

Հարկման նպատակով ֆիզիկական անձանց թվին են դասվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

3. Հարկման օբյեկտ են հանդիսանում ֆիզիկական անձանց կողմից դրամական (Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական շրջանառության մեջ գտնվող դրամով կամ արտարժույթով) և բնամթերային ձևով ստացված հետևյալ եկամուտները՝

-աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները.

-հեղինակային վարձատրությունները.

-ծեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները.

-նվիրատվության և օգնության կարգով ստացված եկամուտները.

-գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները.

-փայամասնակցությունից, արժեթղթերից, ավանդների դիմաց ստացված և այլ

եկամուտները:

Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները հարկման օբյեկտում հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Արտարժույթով ստացված եկամուտները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով՝ ելնելով դրանց ստացման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած արժույթային կուրսից:

4. Այն դեպքերում, երբ ֆիզիկական անձինք ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների միջոցների հաշվին առձեռն ստանում են կանխիկ գումար կամ կտրոններ (այլ փաստաթղթեր) անվանական արժեքի նշումով, որոնք կոնկրետ անձին իրավունք են տալիս երթևեկելու, հաճախելու կամ օգտվելու սովորական պայմաններում վճարովի այլ ծառայություններից, ապա այդ նպատակին ուղղվող միջոցների գումարը մտցվում է ֆիզիկական անձի եկամուտների կազմի մեջ:

Ֆիզիկական անձանց եկամտի կազմի մեջ մտցվում են նաև ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից իրենց կոնկրետ աշխատողների նյութական և սոցիալական վիճակի բարելավման նպատակով կատարվող վճարումները, մասնավորապես՝

-կոմունալ-կենցաղային ծառայությունների արժեքը.

-տարբեր բնույթի աբոնեմենտների, թերթերի, ամսագրերի և գրքերի բաժանորդագրության արժեքը.

-սննդի արժեքը.

-բուժման արժեքը.

-մանկական նախադպրոցական հիմնարկներում և ուսումնական հաստատություններում երեխաների համար ծնողների մոժոժումների փոխհատուցման արժեքը: Ընդ որում, աշխատողի հարկման ենթակա եկամտի կազմի մեջ չեն մտցվում բաժնային մասնակցությամբ մանկական նախադպրոցական հիմնարկների պահպանման համար ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից փոխհատուցվող գումարները.

-աշխատանքի վայր մեկնելու և վերադարձի ուղերթի արժեքը.

-բուժման և հանգստի ուղեգրերի, ներառյալ աշխատողների երեխաների համար ճամբարների և առողջարանների ուղեգրերի արժեքը.

-աշխատողներին շուկայականից (համապատասխան դեպքերում՝ պետական կարգավորվող գներից) ցածր գներով ապրանքների (արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների) իրացման կամ ձեռնարկությունների կողմից սեփական արտադրության արտադրանքը այլ գնորդներին (սպառողներին) բացթողնելու արտադրանքի համար սովորաբար կիրառվող գներից (այդպիսի գների առկա չլինելու դեպքում՝ ձեռք բերման գնից կամ փաստացի ինքնարժեքից) ցածր գներով բացթողնելը (այդ գների և աշխատողներին իրացվող արտադրանքի գների տարբերության գումարները):

Օրինակ. ձեռնարկությունը թողարկում է կահույք և սովորաբար իրացնում այլ սպառողներին միջինը 21000 դրամով: Նույն ամսում իրացրել է նաև իր աշխատողներին 15000 դրամով: Այդ դեպքում տարբերության գումարը՝ 6000 դրամը, մտցվում է աշխատողի հարկման ենթակա եկամուտների կազմի մեջ.

-կենսաթոշակի անցման կապակցությամբ աշխատանքի վետերաններին տրվող միանվագ նպաստների գումարները և այլն:

5. Հարկման նպատակով ֆիզիկական անձանց եկամուտների մեջ չեն մտցվում՝

ա) պետական սոցիալական ապահովության և պետական սոցիալական ապահովագրության նպաստները (բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության, այդ թվում՝ հիվանդ երեխայի, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստների).

-հղիության և ծննդաբերության նպաստները.

-երեխայի ծննդյան միանվագ նպաստները.

-երեխայի խնամքի համար նպաստները (մինչև օրենսդրությամբ նախատեսված տարիքին հասնելը).

-թաղման նպաստները.

-սակավ ապահովված ընտանիքների երեխաների համար նպաստները.

-ի ծնե հաշմանդամների նպաստները.

-ժամկետային ծառայության զինծառայողների երեխաների նպաստները.

-երեխաներ ունեցող, սակայն կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ չստացող այրիների համար նպաստները.

-ալիմենտի վճարումից խուսափող ծնողների որոնման ժամանակաշրջանում անչափահաս երեխաների համար նպաստները.

-գործող օրենսդրության համապատասխան վճարվող այլ պետական նպաստները.

բ) Հայաստանի Հանրապետության ԳԽ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկով նախատեսված հասարակական, այդ թվում բարեգործական կազմակերպությունների, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների միջոցներից ֆիզիկական անձանց դրամական ու բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները (նշված կազմակերպությունների ցանկը կցվում է՝ հավելված 1), այդ թվում նաև այն դեպքերում, երբ վերը նշված կազմակերպությունների միջոցների հաշվին օգնությունը ցույց է տրվում ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից:

գ) բոլոր տեսակի կենսաթոշակները, որոնք նշանակվում են Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կենսաթոշակների կամավոր ապահովագրության պայմաններով վճարվող լրացուցիչ կենսաթոշակները:

Կենսաթոշակների այն գումարները, որոնք նշանակվում և վճարվում են ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների միջոցների հաշվին այլ կարգով, քան սահմանված է ՀՀ կենսաթոշակային օրենսդրությամբ, մտցվում են հարկման ենթակա եկամուտների կազմի մեջ.

դ) այն գումարները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացվում են որպես վնասի փոխհատուցում աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղումների, առողջության այլ վնասումների կամ մահվան հետևանքով.

ե) փոխհատուցման վճարները՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված նորմաների սահմաններում, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

Սահմանված նորմաներին գերազանցող փոխհատուցման վճարների գումարները մտցվում են հարկման ենթակա եկամուտների կազմի մեջ:

Փոխհատուցման վճարներին մասնավորապես դասվում են՝

-գործուղման ծախսերը (դաշտային բավարարությունը) լրավճարի այն գումարները, որոնք վճարվում են հանքահորերում (հանքերում) ստորգետնյա աշխատանքներում մշտապես զբաղված աշխատողներին հիմնանցքից մինչև աշխատանքի վայրը և դեպի ետ նորմատիվային տեղափոխման համար, տարիֆային դրույքների, դրույքների հավելումները այն անձանց, որոնք մշտական աշխատանքը ընթանում է ճանապարհին կամ կրում է շրջիկ բնույթ, ինչպես նաև այն անձանց, որոնք զբաղված են շինարարության վրա և ունեն տեղաշարժման բնույթի աշխատանք.

-միանվագ նպաստները, օրապահիկը, տեղափոխման և ունեցվածքի փոխադրման վճարը

աշխատողին այլ վայր աշխատանքի փոխադրման (բաշխման) դեպքում՝ կապված նախնական համաձայնությամբ կազմահավաքի կամ մասսայական հավաքի կարգով նրան աշխատանքի ընդունելու հետ.

-աշխատողին պատկանող գործիքը օգտագործելու, չտրված հատուկ հագուստի և հատուկ կոշիկների, ինչպես նաև անձնական մեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար փոխհատուցումը.

գ) զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող միանվագ վճարները.

ե) պարենային բավարարման արժեքը, որը նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև այն գումարները, որոնք վճարվում են այդ բավարարման փոխարեն.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործազրկության նպաստները.

թ) տարերային աղետների, մյուս արտակարգ իրավիճակների կապակցությամբ տրվող նյութական օգնության, ինչպես նաև այլ օգնության գումարները՝ անկախ դրանց չափից, որոնք տրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության, գործադիր իշխանության տեղական մարմինների (սոցիալական ապահովագրության ֆոնդի) և օտարերկրյա պետությունների կողմից: Մյուս դեպքերում ցույց տրվող նյութական օգնության գումարները ենթակա են հարկման ընդհանուր սահմանված կարգով.

ժ) Հայաստանի Հանրապետության պետական փոխառությունների պարտատոմսերի շահումները և այդ փոխառությունների մարումների դիմաց ստացված գումարները.

ի) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող վիճակախաղերի տոմսերի գծով ոչ դրամական շահումները ինչպես նաև դրանց փոխարեն ստացվող գումարները.

լ) Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի տոկոսներն ու շահումները.

խ) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացած գումարները.

ծ) ալիմենտները (ստացողների մոտ).

կ) ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից ստացված գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների.

հ) գյուղատնտեսական գործունեության (գյուղատնտեսական արտադրանքի արտադրության) գծով ստացված եկամուտները, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության գծով ստացված եկամուտները, եթե վերջիններիս գծով հասույթի (եկամտի) տեսակարար կշիռը չի գերազանցում ընդհանուր (գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության գծով) հասույթի (եկամտի) 25 տոկոսը: Ոչ գյուղատնտեսական գործունեության մասով վերը նշված նորմը կիրառվում է դրա գծով հասույթի (եկամտի) առանձնացված հաշվառում տարվելու դեպքում:

Գյուղատնտեսական գործունեության համար վճարողներից գանձվում է հողի հարկ:

Սույն ենթակետում նշված դրույթը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ հաստատված ցանկում նշված արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփականատերերի վրա.

ձ) ֆիզիկական անձանց ստացած ապահովագրական գումարները, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական մուծումներն իրականացվում են ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների միջոցներից.

ր) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված դրամական ու բնամթերային տեսքով եկամուտները, բացառությամբ հեղինակային վարձատրության այն գումարների, որոնք ստանում են գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև հայտնագործությունների, գյուտերի և արդյունաբերական նմուշների հեղինակների ժառանգները (իրավահաջորդները).

ճ) ձեռնարկություններից, հիմնարկներից և կազմակերպություններից տարվա ընթացքում ամսական նվազագույն աշխատավարձի հնգապատիկ չափի սահմաններում ստացված նվերների (իրային պարգևների և ծառայությունների) արժողության գումարները:

Իրային պարգևների գումարները, որոնք ստացման պահին գերազանցում են ամսական նվազագույն աշխատավարձի հնգապատիկ չափը, ընդհանուր հիմունքներով մտցվում են հարկման ենթակա եկամուտների մեջ: Եթե տարվա ընթացքում տրվում են մի քանի նվերներ, ապա հաշվարկի համար հիմք է ընդունվում այն ամսվա նվազագույն աշխատավարձը, որում տրվել է նվերը:

Օրինակ (թվերը պայմանական են). ձեռնարկությունը փետրվար ամսին նվիրել է աշխատողին 2000 դրամ արժողությամբ ժամացույց (ամսական նվազագույն աշխատավարձի չափը փետրվարին եղել է 380 դրամ), մայիս ամսին նվիրել է 6000 դրամ արժողությամբ ռադիոընդունիչ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը մայիսին եղել է 500 դրամ), սեպտեմբեր ամսին նվիրել է 8000 դրամ արժողությամբ կոստյում (ամսական նվազագույն

աշխատավարձի չափը սեպտեմբերին եղել է 800 դրամ), նոյեմբեր ամսին այդ աշխատողի համար կատարել է 5000 դրամի բնակարանի վերանորոգման աշխատանքներ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը նոյեմբերին եղել է 1000 դրամ): Հարկման ենթակա եկամուտների մեջ պետք է մտցվեն նվերների հետևյալ գումարները՝

-փետրվար ամսին տրված նվերների արժեքից աշխատողի հարկման ենթակա եկամտի մեջ մտցվում է 100 դրամ (2000-380x5).

-մայիս ամսվա հարկման ենթակա եկամտի մեջ մտցվում է երկու նվերների այն գումարը, որը գերազանցում է մայիս ամսվա ամսական նվազագույն աշխատավարձի 5-ապատիկը (դուրս եկած փետրվար ամսին հարկման ենթակա եկամտի գումարը) կամ 5400 դրամ. $/(2000+6000)-(5 \times 500)=5500-100$.

-սեպտեմբեր ամսվա հարկման ենթակա եկամտի մեջ մտցվում է երեք նվերների այն գումարը, որը գերազանցում է սեպտեմբերի ամսական նվազագույն աշխատավարձի 5-ապատիկը (դուրս եկած փետրվար և մայիս ամիսներին հարկման ենթակա եկամտի գումարը) կամ 6500 դրամ $/(2000+6000+8000)-(5 \times 800)-(5400+100)$.

-աշխատողի նոյեմբեր ամսվա հարկման ենթակա եկամտի մեջ մտցվում է չորս նվերների այն գումարը, որը գերազանցում է նոյեմբերի ամսական նվազագույն աշխատավարձի 5-ապատիկը (դուրս եկած փետրվար, մայիս և սեպտեմբեր ամիսներին հարկման ենթակա եկամտի գումարը) կամ 4000 դրամ $/(2000+6000+8000+5000)-(5 \times 1000)-(6500+5400+100)$.

մ) մրցույթներում և մրցույթում ստացված ոչ դրամական մրցանակների արժեքն ամբողջությամբ, իսկ դրամական մրցանակների արժեքը՝ տարվա ընթացքում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի քսանչորսապատիկ չափի շրջանակներում:

Ամսական նվազագույն աշխատավարձի քսանչորսապատիկ չափին գերազանցող գումարը մտցվում է հարկման ենթակա եկամտի մեջ ընդհանուր հիմունքներով:

Հարկման ենթակա եկամտի մեջ մրցանակների արժեքից մտցվող գումարը որոշվում է սույն կետի «ճ» ենթակետում բերված կարգով.

յ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ մասնագիտական ու պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարվող կրթաթոշակները:

Այն կրթաթոշակները, որոնք վճարվում են ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից, ենթակա են հարկման սույն հրահանգի II բաժնի 16 կետով սահմանված դրույքաչափերով:

(5-րդ կետը լրաց. 15.03.96 N 160)

6. Հարկման ենթակա եկամուտները* յուրաքանչյուր ամսում պակասեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի տասնապատիկ չափով, եթե դրանք ստանում են հետևյալ ֆիզիկական անձինք՝

* Հարկման ենթակա եկամուտը դա փաստացի ստացված, հարկման օբյեկտ հանդիսացող եկամուտն է, համապատասխան դեպքերում նվազեցված այդ եկամտի ստացման հետ կապված ծախսերի չափով:

ա) Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները, նախկին Խորհրդային Միության հերոսները, «Փառքի» բոլոր երեք աստիճանների շքանշաններով պարգևատրված անձինք.

բ) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները և այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական ծառայության այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղման կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով, նախկին պարտիզանների թվից հաշմանդամները, ինչպես նաև կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան՝ զինծառայողների վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները.

գ) առաջին և երկրորդ աշխարհամարտերի մասնակիցները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի պաշտպանության այլ մարտական գործողությունների մասնակից այն զինծառայողները, ովքեր ծառայել են գործող բանակի կազմի մեջ մտած զորամասերում, շտաբներում ու հիմնարկներում, և նախկին պարտիզանները.

դ) ի ծնե հաշմանդամները, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.

ե) այն անձինք, ովքեր հիվանդացել և ատոմային օբյեկտների վթարների հետևանքով տարել են ճառագայթային հիվանդություն, մասնակցություն են ունեցել այդպիսի վթարների վերացման օտարացման գոտու սահմաններում, վթարի հետևանքների վերացման ժամանակաշրջանում զբաղվել են ատոմային օբյեկտների շահագործմամբ կամ այլ աշխատանքներով:

Օրինակ. ձեռնարկության աշխատողը երկրորդ աշխարհամարտի մասնակից է և ստանում է 6000 դրամ աշխատավարձ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը 500 դրամ է): Այս դեպքում աշխատողի ամսական հարկվող եկամուտը կկազմի 1000 դրամ $/(6000-(10 \times 500))$:

Սույն կետում նշված արտոնության (պակասեցման) իրավունքը վերապահվում է այն հիմնավորող փաստաթղթերի (Խորհրդային Միության հերոսի գրքույկ, շքանշանի գրքույկ, հաշմանդամի արտոնության իրավունքի վկայական, զինվորական կոմիսարիատի տեղեկանք, կենսաթոշակի վկայական, բժշկաաշխատանքային փորձաքննության հանձնաժողովի տեղեկանք) հիման վրա:

7. Հարկման ենթակա եկամուտները յուրաքանչյուր ամսում պակասեցվում են Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի ութնամսական չափով, եթե դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով ստանում են զինծառայողները՝ աշխատավարձի, կոչումների, դրամական բավարարման, դրամական մյուս վարձատրությունների և վճարների գծով:

8. Հարկման ենթակա եկամուտները յուրաքանչյուր ամսում պակասեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի վեցամսական չափով, եթե դրանք ստանում են հետևյալ ֆիզիկական անձինք՝

ա) Հայաստանի Հանրապետությունը և Նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական ծառայության այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի կամ խեղման հետևանքով զոհված, կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով մահացած զինծառայողների, ինչպես նաև ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված պետական ծառայողների ծնողները և ամուսինը:

Արտոնությունը (պակասեցումը) վերապահվում է զոհված (մահացած) ծառայողի և՛ ծնողներին, և՛ ամուսնուն՝ կենսաթոշակի վկայականի հիման վրա, որտեղ դրված է դրոշմակնիք «զոհված զինվորի այրի (հայր, մայր)» կամ առկա է համապատասխան գրառում՝ վավերացված կենսաթոշակային վկայական տվող հիմնարկի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

Այն դեպքում, երբ նշված անձինք չեն հանդիսանում կենսաթոշակառուներ, իրավունքը վերապահվում է զինծառայողի կամ պետական ծառայողի զոհվելու մասին համապատասխան պետական մարմնի տեղեկանքի հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունը և Նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական ծառայության այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի կամ խեղման հետևանքով զոհված, կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով մահացած զինծառայողի, ինչպես նաև ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված պետական ծառայողի այրուն արտոնությունը (պակասեցումը) վերապահվում է միայն այն դեպքում, եթե նա հետագայում չի ամուսնացել:

բ) օտարերկրյա պետություններում ծավալված մարտական գործողությունների ընթացքում զինվորական պարտականություններ կատարած զինծառայողները, այդ գործողությունների ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնական ու վարժական հավաքներին մասնակցած զինապարտները:

Արտոնության (պակասեցման) վերապահման համար հիմք են հանդիսանում արտոնության իրավունքի մասին վկայականը, շրջանային (քաղաքային) զինկոմիսարիատների, զինվորական մասերի, զինվորական ուսումնական հաստատությունների, Նախկին ԽՍՀՄ-ի պաշտպանության նախարարության, պետական անվտանգության կոմիտեի, ներքին գործերի նախարարության ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության մյուս համապատասխան մարմինների տեղեկանքները.

գ) համատեղ ապրող և մշտական խնամք պահանջող ի ծնե հաշմանդամին, 1-ին խմբի հաշմանդամին խնամող ծնողներից մեկը (իրենց ընտրությամբ), ամուսինը, խնամակալը.

դ) խնամքի տակ գառամյալ ծնողներ (հայրը՝ 60 և ավելի, մայրը՝ 55 և ավելի տարիքի) կամ անչափահաս երեխաներ ունեցող 3-րդ խմբի հաշմանդամները:

«գ» և «դ» ենթակետերում թվարկված անձանց արտոնությունը (պակասեցումը) վերապահվում է կենսաթոշակային վկայականի կամ խնամքի անհրաժեշտությունը հաստատող առողջապահական մարմինների բժշկական տեղեկանքների, իսկ համատեղ ապրելու մասով՝ բնակարանային շահագործման մարմինների տեղեկանքների հիման վրա:

Օրինակ. ձեռնարկության աշխատողը օտարերկրյա պետություններում ծավալված մարտական գործողությունների մասնակից է և ստանում է 6000 դրամ աշխատավարձ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը 500 դրամ է): Այս դեպքում աշխատողի ամսական հարկվող եկամուտը կկազմի 3000 դրամ /6000-(6x500)/:

9. Հարկման ենթակա եկամուտները յուրաքանչյուր ամսում պակասեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի կրկնամսական չափով, եթե դրանք հիմնական աշխատանքի վայրում ստանում են սույն հրահանգի 6, 7, 8-րդ կետերում չթվարկված ֆիզիկական անձինք:

Օրինակ. ձեռնարկության աշխատողը հիմնական աշխատանքի վայրում ամսական ստանում է 6000 դրամ աշխատավարձ (ամսական նվազագույն աշխատավարձը 500 դրամ է): Այս դեպքում աշխատողի ամսական հարկվող եկամուտը կկազմի 5000 դրամ /6000-(2x500)/:

Նշված արտոնությունը (պակասեցումը) վերապահվում է նաև հիմնական աշխատանքի վայր չունենալու դեպքում:

Օրինակ. քաղաքացին, որը կենսաթոշակառու է և այլ եկամտի աղբյուր չունի (բացի կենսաթոշակից) տունը վարձակալության տալուց վարձակալական վճարի տեսքով տարեկան ստացել է 48000 դրամ եկամուտ: Ամսական հարկման ենթակա եկամուտը կազմում է 4000 դրամ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը 500 դրամ է): Ամսական հարկվող եկամուտը կկազմի 3000 դրամ /4000-(2x500)/:

10. Սույն հրահանգի 6-9 կետերում նախատեսված մի քանի հիմքերով միաժամանակ եկամուտները պակասեցնելու իրավունքի առկայության դեպքում վերապահվում է արտոնություններից (պակասեցումներից) մեկը՝ առավելագույնը:

11. Ֆիզիկական անձանց հարկման ենթակա եկամուտները ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով լրացուցիչ պակասեցվում են Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի չափով՝
ա) յուրաքանչյուր երեխայի և խնամառուի մինչև 18 տարեկան հասակը (ցերեկային ուսուցման ուսանողների և սովորողների մինչև 24 տարեկան դառնալը),

բ) եկամտի ինքնուրույն աղբյուրներ չունեցող յուրաքանչյուր այլ խնամառուի համար՝ անկախ նրանից խնամառուները բնակվում են խնամակալի հետ, թե ոչ:

Հարկման ենթակա եկամուտների պակասեցման նպատակով ուսանողների և սովորողների թվին դասվում են ցերեկային ուսուցմամբ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական, պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնական հաստատությունների, միջնակարգ, ոչ լրիվ միջնակարգ դպրոցների ուսանողներն ու սովորողները, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրները:

Նշված կարգը պահպանվում է մինչև երեխաների 18, ուսանողների և սովորողների 24 տարին լրանալը, իսկ նրանց, ինչպես նաև խնամառուների մահվան դեպքում՝ մինչև տարեվերջ:

Հարկման ենթակա եկամտից նախատեսված պակասեցումը վերապահվում է ամուսիններից երկուսին, ինչպես նաև խնամակալին՝ հիմնական աշխատանքի վայրում:

Օրինակ. հիմնական աշխատանքի վայրում քաղաքացին ամսական ստանում է 6000 դրամ եկամուտ և իր խնամքի տակ ունի եկամտի ինքնուրույն աղբյուր չունեցող երկու խնամառու (ամսական նվազագույն աշխատավարձի չափը 500 դրամ է): Այս դեպքում ամսական հարկվող եկամուտը կազմում է 4000 դրամ /6000-(2x500+2x500)/:

Նշված արտոնությունը (պակասեցումը) վերապահվում է նաև հիմնական աշխատանքի վայր չունենալու դեպքում:

Օրինակ. հիմնական աշխատանքի վայր չունեցող ֆիզիկական անձի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված տարեկան հարկման ենթակա եկամուտը կազմել է 30000 դրամ:

Նշված անձը իր խնամքի տակ ունի մինչև 18 տարեկան հասակի 2 երեխա և մեկ խնամառու: Ամսական հարկման ենթակա եկամուտը կկազմի 2500 դրամ (30000:12 ամիս): Ամսական նվազագույն աշխատավարձի չափը 400 դրամ լինելու պայմաններում ամսական հարկվող եկամուտը կկազմի 500 դրամ /2500-(2x400+3x400)/:

Ֆիզիկական անձանց հարկման ենթակա եկամուտների նվազեցումը կատարվում է սկսած այն ամսից, երբ ծնվել է երեխան կամ երբ ֆիզիկական անձը հանդես է եկել որպես խնամառու:

Խնամառուների թվաքանակի կրճատման (բացառությամբ մահացության դեպքերի) կամ տարվա ընթացքում նրանց եկամտի ինքնուրույն աղբյուր առաջանալու դեպքում, խնամառուների համար արտոնությունը (պակասեցումը) չի կիրառվում այն ամսին հաջորդող ամսից, երբ կրճատվել է խնամառուների թիվը կամ նրանց մոտ առաջացել է եկամտի ինքնուրույն աղբյուր:

Հարկման նպատակով խնամառուների թվին են դասվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվին ապրող և եկամտի այլ աղբյուր չունեցող անձինք:

Մասնավորապես խնամառուների թվին են դասվում մինչև նախատեսված տարիքին հասնելը երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կանայք, ովքեր այլ եկամուտներ չունեն, բացի օրենսդրությամբ սահմանված չափերով յուրաքանչյուր ամսվա փոխհատուցման վճարից և նպաստից:

Հարկման նպատակով խնամառուների թվին չեն դասվում՝

-անձինք (բացի սույն կետի «ա» ենթակետում նշվածների), ովքեր ստանում են կրթաթոշակ, կենսաթոշակ և գործազրկության նպաստ:

-անձինք, ովքեր գտնվում են պետության խնամքին (պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարանների սովորողները, մանկատների և երեխաների տների սաները):

-մասնագիտացված դպրոցների սովորողները, տուն-ինտերնատներում գտնվող երեխաները, որոնց խնամքի համար խնամակալներից վճար չի գանձվում, ինչպես նաև դպրոցներին կից ինտերնատներում պետության լրիվ ապահովության տակ գտնվող երեխաները:

Քաղաքացիները, որոնց կենսաթոշակի հաշվարկման ժամանակ տրվել է խնամքի հավելում, համարվում են խնամակալ այն քաղաքացու նկատմամբ, որի համար հատկացվել է այդ հավելումը:

Երեխաների և խնամառուների գծով ֆիզիկական անձանց հարկման ենթակա եկամուտների պակասեցումը կատարվում է՝

-երեխաների առկայության դեպքում՝ երեխայի ծննդյան վկայականի պատճենի կամ ուսումնական հաստատության տեղեկանքի (այն մասին, որ երեխան սովորում է ցերեկային բաժանմունքում) հիման վրա:

-խնամառուի առկայության դեպքում՝ բնակարանային շահագործման մարմնի կամ պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից հաստատված տեղեկանքների, իսկ անձնական սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող քաղաքային վայրերի տներում ապրող անձանց առնչությամբ՝ թաղային կոմիտեների նախագահների կողմից վավերացված տեղեկանքների հիման վրա՝ սույն հրահանգի հավելված 2-ում նշված ձևով:

Ֆիզիկական անձանց կողմից երեխաների և խնամառուների առկայության մասին տեղեկանքները հիմնական աշխատանքի (ծառայության, ուսման) վայր են ներկայացվում մինչև հունվարի առաջին կեսի աշխատավարձի վճարումը, իսկ ընտանիքի անդամների կազմի և խնամառուների փոփոխության դեպքում՝ նման փոփոխություն կատարված ամսին

հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Այն դեպքում, երբ քաղաքացիների մոտ հետազայում փոփոխություններ չեն կատարվել, ներկայացված փաստաթղթերը պահպանում են իրենց ուժը հետագա տարիների համար:

Երեխաների և խնամառուների գծով հարկման ենթակա եկամուտը պակասեցնելու վերաբերյալ ներկայացվող տվյալների հավաստիության համար դիմողը կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում աշխատանքային և դրան հավասարեցված պարտականությունների կատարման դիմաց եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց յուրաքանչյուր ամսվա հարկման ենթակա եկամտի պակասեցումը իրականացվում է այդ ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից:

Այլ ֆիզիկական անձանց հարկման ենթակա եկամտի պակասեցումները իրականացվում է ինքնուրույնաբար (սահմանված կարգով և դեպքերում արտացոլելով դրանք եկամուտների մասին հայտարարագրում) տարին ավարտվելուց հետո՝ տարեկան հարկի հաշվարկման ժամանակ, ելնելով այն ամիսների թվից, որոնցում ստացվել են եկամուտները: Ընդ որում, երբ հարկ վճարողները չունեն հիմնական աշխատանքի վայր, ապա սույն հրահանգի 6-9 և 11 կետերով նախատեսված հարկման ենթակա եկամտի պակասեցումները (արտոնությունները) կարող են կիրառվել վճարողի ցանկությամբ և նրա դիմումի համաձայն (դիմումի ձևը բերված է սույն հրահանգի հավելված N 13-ում) հարկային մարմինների կողմից:

13. Սույն հրահանգի 6-9,11 կետերում թվարկված հարկման ենթակա եկամուտների պակասեցումները եկամուտների ստացման ամեն ամսվա համար կատարվում են միայն մեկ անգամ և եկամտի վճարման մեկ աղբյուրում:

ԲԱԺԻՆ II

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՃԻՆՏԱՆՔԻ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՈՒՍՄԱՆ) ՎԱՅՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Հրահանգի սույն բաժնին համապատասխան հարկման ենթակա են մեկ ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում (որտեղ վարվում են աշխատանքային գրքույկները)՝ նրա հետ աշխատանքային կամ դրան հավասարեցված հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձանց ստացած եկամուտները՝ դիտելով դրանք որպես հիմնական աշխատանքի (ծառայության, ուսման) վայրում ստացված եկամուտներ:

Հարկման նպատակով աշխատանքային և դրան հավասարեցված պարտականություններ են համարվում.

ֆիզիկական անձանց կողմից կոնկրետ մասնագիտության, որակավորման, պաշտոնի գծով նրանց և ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների միջև կնքված աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) հիման վրա աշխատանքների կատարումը, հասարակական, կրոնական և այլ կազմակերպությունների, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերատիվների անդամության հետ կապված աշխատանքների, ինչպես նաև ծառայության և ուսման հետ կապված աշխատանքների և պարտականությունների կատարումը:

15. Հիմնական աշխատանքի (ծառայության, ուսման) վայրից քաղաքացիների կողմից ստացված ընդհանուր եկամուտների մեջ մտցվում են տվյալ ձեռնարկությունից, հիմնարկից, կազմակերպությունից ստացված բոլոր եկամուտները, մասնավորապես՝

- ամսական աշխատավարձի գումարները, ինչպես նաև պարգևավճարները և նրանց կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված ցանկացած այլ վարձատրություններն ու վճարումները², այդ թվում նույն վայրում համատեղությամբ աշխատելու դիմաց, քաղաքացիաիրավական պայմանագրերի և այլ հիմքերի հիման վրա կատարված աշխատանքների դիմաց վարձատրությունը, ինչպես նաև արժեթղթերից շահութամասերի (դիվիդենտների) տեսքով ստացված եկամուտները, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության շահույթի (եկամտի) բաշխման արդյունքում ստացված եկամուտները (այդ թվում այն եկամուտները, որ ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, սեփական միջոցների հաշվին վճարում են իրենց աշխատողներին՝ նրանց նյութական և սոցիալական բարեկեցության համար) և այլն:

- ՀՀ տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ և օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններում, միջազգային կազմակերպություններում ու միավորումներում, օտարերկրյա ֆիրմաներում, բանկերում և դրանց առանձնացված ստորաբաժանումներում, ինչպես նաև համանման այլ մարմիններում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման դիմաց վճարված աշխատավարձը, պարգևավճարները և այլ վճարումները.

- իրավաբանական կոնսուլտացիաներում աշխատելու դիմաց փաստաբանների ստացած վարձատրությունների գումարները.

- գինծառայողների աշխատավարձի, կոչումների դիմաց վճարումները, դրամական բավարարումը, դրամական մյուս վարձատրությունները և վճարումները.

- կրոնական կազմակերպություններում, կրոնական կազմակերպությունների դուստր ձեռնարկություններում, ինչպես նաև նրանց կողմից ստեղծված բարեգործական հաստատություններում աշխատողներին (ներառյալ հոգևոր ծառայողներին) վճարված

եկամուտները.

-ծեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների, միջնակարգ մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողների, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրների աշխատանքի դիմաց վճարված եկամուտները և կրթաթոշակները:

16. Սույն հրահանգի 15-րդ կետում թվարկված եկամուտներից հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով`

Ամսական հարկվող եկամտի չափը ³	Հարկի գումարը
մինչև նվազագույն աշխատավարձի 10-ապատիկը ներառյալ	հարկվող գումարի 12 տոկոսը
նվազագույն աշխատավարձի 10-ապատիկը գերազանցող չափից մինչև 20-ապատիկը ներառյալ	նվազագույն աշխատավարձի 120 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 10-ապատիկը գերազանցող գումարի 18 տոկոսը
նվազագույն աշխատավարձի 20-ապատիկը գերազանցող չափից մինչև 40-ապատիկը ներառյալ	նվազագույն աշխատավարձի 300 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 20-ապատիկը գերազանցող գումարի 25 տոկոսը
նվազագույն աշխատավարձի 40-ապատիկը գերազանցող չափից ավելի	նվազագույն աշխատավարձի 800 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 40-ապատիկը գերազանցող գումարի 30 տոկոսը

³ Հարկվող եկամուտը հարկման ենթակա եկամուտն է` հաշվի առած սույն հրահանգի I-ին բաժնի 6-9, 11 կետերում թվարկված պակասեցումները (արտոնությունները):

17. Սույն բաժնում նշված անձանց բոլոր այն եկամուտները, որոնք ստացվում են նրանց կողմից աշխատանքային և դրանց հավասարեցված պարտականությունների կատարման հետ չկապված աշխատանքների կատարման դիմաց կամ սույն բաժնի 15-րդ կետում նշված այլ եկամուտների ձևով, ենթակա են հարկման հիմնական եկամտի (աշխատավարձ, պարգևավճար և այլ վճարումներ) հետ միասին:

Օրինակ. մայիս ամսին ծեռնարկությունում աշխատանքային պայմանագրով աշխատող քաղաքացու աշխատավարձը կազմել է 1800 դրամ: Նույն ծեռնարկությունում քաղաքացին միաժամանակ համատեղությամբ կատարել է աշխատանքներ և ստացել 400 դրամ: Նույն ամսում քաղաքացուն տրվել է նաև 1500 դրամ պարգևավճար, 1000 դրամ նյութական օգնություն և երեխայի ուսման վարձի վճարման համար փոխանցվել է 5000 դրամ: Այդ ծեռնարկության արժեթղթերի դիմաց շահութամասերի (դիվիդենտների) տեսքով քաղաքացին որպես բաժնետեր ստացել է նաև 1400 դրամ:

Այդ դեպքում քաղաքացու մայիս ամսվա հարկման ենթակա եկամուտը կազմում է 11100 դրամ (1800+400+1500+1000+5000+1400), որից օրենսդրությամբ սահմանված պակասեցումները կատարելուց հետո որոշվում է մայիս ամսվա հարկվող եկամտի չափը:

18. Եթե աշխատանքի վարձատրությունը կատարվում է ամսական երկու անգամ, ապա ծեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից հարկը սահմանված չափերով հաշվարկվում է յուրաքանչյուր ամիս, ելնելով անցած ամսվա վարձատրության գումարից և պահվում է ամսվա առաջին կեսի վարձատրությունը վճարելիս:

Այն դեպքում, երբ աշխատողներին վարձատրությունը տրվում է ամիսը մեկ անգամ, ապա հարկը հաշվարկվում է այն ամսվա վարձատրությունից, որի համար կատարվում է վճարումը, և պահվում է այդ նույն ամսվա համար վարձատրությունը վճարելու ժամանակ:

19. Աշխատանքի ընդունված աշխատողներից առաջին ամսվա աշխատանքի վարձատրության գծով հարկը (եթե այդ վարձատրությունը գերազանցում է ամսական նվազագույն աշխատավարձի կրկնապատիկ չափը) պահվում է հաջորդ ամսվա առաջին կեսի վարձատրությունից: Եթե վարձատրությունը կատարվում է ամիսը մեկ անգամ, ապա հարկը պահվում է տվյալ ամսվա համար նրա վճարման ժամանակ, իսկ եթե վարձատրությունը կատարվում է ամսվա մեջ երկու անգամ, և սահմանվում է ընթացիկ վարձատրությունից հարկը պահելու կարգ, ապա այն պահվում է տվյալ ամսվա երկրորդ կեսի վարձատրությունը վճարելիս:

20. Աշխատողն արձակուրդ գնալիս հարկը պահվում է հետևյալ կարգով`

-հարկը պահվում է անցած ամսվա համար առանձին (եթե մինչև աշխատողի արձակուրդ գնալու պահը այդ հարկը պահված չի եղել):

-ընթացիկ ամսվա արձակուրդային գումարից և վարձատրությունից առանձին, եթե աշխատողը արձակուրդում մնալու է մինչև ամսվա վերջը:

-հաջորդ ոչ լրիվ ամսվա վրա ընկնող արձակուրդային գումարից արձակուրդ գնալու ժամանակ հարկ չի պահվում: Հարկը այդ գումարից պահվում է արձակուրդից վերադառնալուց հետո, տվյալ ամսվա ընդհանուր վարձատրությունից` ընդհանուր

հիմունքներով.

Այսպես, հունիսի 17-ին արձակուրդ գնալիս հարկը պահվում է հունիս ամսվա վարձատրությունից և հունիսի վրա ընկնող արձակուրդային գումարից: Արձակուրդից հուլիսի 15-ին նրա վերադառնալուց հետո հարկը պետք է պահվի միայն օգոստոս ամսվա առաջին կեսի վարձատրությունը վճարելիս (օգոստոսի 16-ին), հուլիսի առաջին կեսի վրա ընկնող արձակուրդային գումարի և հուլիս ամսվա վարձատրության ամբողջական գումարից:

Հունիսի 26-ին արձակուրդ գնալիս հարկը պահվում է այնպես, ինչպես հունիսի 17-ին արձակուրդ գնալիս:

Հուլիսի 1-ից արձակուրդ գնալիս հարկը պահվում է հունիս ամսվա վարձատրությունից: Տվյալ դեպքում հուլիս ամսվա արձակուրդային գումարից հարկ չի պահվում: Հուլիսի վերջին, արձակուրդից նրա վերադառնալուց, հարկը պետք է պահվի միայն օգոստոսի 16-ին հուլիս ամսվա վարձատրության ընդհանուր գումարից (արձակուրդայինի և հուլիսի վերջին օրերի աշխատավարձից):

Օրինակ 1.

Աշխատողը գնում է արձակուրդ հունիսի 10-ից և վերադառնում է հունիսի 27-ին: Աշխատավարձի վճարման օրերն են՝ 5-ը և 20-ը: Արձակուրդ գնալիս աշխատողից հարկը պահվում է մայիս ամսվա վարձատրությունից: Արձակուրդից նրա վերադառնալուց հարկը պետք է պահվի հուլիս ամսվա վարձատրությունը վճարելիս (հուլիսի 20-ին) հունիս ամսվա վարձատրության ընդհանուր գումարից (աշխատավարձը և արձակուրդայինը):

Օրինակ 2.

Աշխատողը արձակուրդ է գնում հունիսի 1-ից մինչև ամսվա վերջը: Այս դեպքում հարկը պետք է պահվի մայիս ամսվա վարձատրությունից և առանձին հունիս ամսվա արձակուրդայինից:

Օրինակ 3.

Աշխատողը հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը ներառյալ գնում է արձակուրդ: Աշխատավարձի վճարման օրերն են՝ 1-ը և 16-ը:

Արձակուրդ գնալիս հարկը պետք է պահվի հունիս ամսվա վարձատրությունից և հուլիս ամսվա արձակուրդայինից: Արձակուրդից վերադառնալուց հետո հարկը պետք է պահվի սեպտեմբերի 16-ին, օգոստոս ամսվա վարձատրության ընդհանուր գումարից (օգոստոսի արձակուրդայինը և օգոստոսի աշխատանքային օրերի աշխատավարձը):

Օրինակ 4.

Աշխատողը հունիսի 17-ից մինչև օգոստոսի 11-ը գնում է արձակուրդ: Աշխատավարձը վճարվում է ամսական 1 անգամ՝ ամսի 20-ին: Այս դեպքում արձակուրդ գնալիս աշխատողից հարկը պահվում է հունիսին կատարված վարձատրության ու արձակուրդայինից և հուլիսի արձակուրդային գումարից: Օգոստոս ամսվա վրա ընկնող արձակուրդային գումարից հարկ չի պահվում:

Արձակուրդից վերադառնալուց հետո օգոստոս ամսվա վարձատրությունը վճարելիս (օգոստոսի 20-ին) հարկը պետք է պահվի օգոստոս ամսվա վարձատրության ընդհանուր գումարից, ներառյալ նաև օգոստոսի 1-ից մինչև 11-ի արձակուրդայինը:

Անհրաժեշտության դեպքում, եթե կազմակերպությունների ղեկավարները մինչև արձակուրդի վերջանալը հերթական արձակուրդում գտնվող առանձին աշխատողների օրենսդրությամբ սահմանված կարգով ժամկետից շուտ ետ են կանչում աշխատանքի, հարկի պահումը կատարվում է այն կարգով, ինչպես արձակուրդից վերադառնալիս (որքանով որ արձակուրդային գումարները մնում են արձակուրդից ետ կանչվածների մոտ, դրանք պետք է հաշվի առնվեն ի հաշիվ հետագա վարձատրությունների):

Օրինակ 5.

Փետրվարի 1-ից մինչև 28-ը արձակուրդ գնալիս աշխատողին վճարվել է 10000 դրամ, որից պահվել է հարկ 1562,5 դրամ: Փետրվարի 16-ից աշխատողը ետ է կանչվել աշխատանքի, որի կապակցությամբ նրա փաստացի վարձատրությունը արձակուրդային գումարի հետ միասին կազմել է 16000 դրամ: Այս օրինակում հարկը փետրվարի համար կազմում է 3300 դրամ, որի հետ կապված աշխատողին մարտ ամսվա առաջին կեսի վարձատրությունը վճարելիս լրացուցիչ պահվում է 1737,5 դրամ (3300-1562,5):

21. Աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում հարկը պահվում է ելնելով անցած ամսվա վարձատրությունից (եթե այն պահված չի եղել) և առանձին՝ ընթացիկ ամսվա վարձատրությունից (առ ազատվելու օրը), եթե այդ վարձատրության գումարը գերազանցում է ամսական նվազագույն աշխատավարձի կրկնապատիկ չափը:

Եթե աշխատողներին աշխատանքից ազատելու ժամանակ նրանց վճարվում է չօգտագործված արձակուրդի փոխհատուցում անցած աշխատանքի լրիվ տարվա համար և միաժամանակ ընթացիկ աշխատանքային տարվա աշխատած մասի համար, այսպե՛ս հարկի հաշվարկման ժամանակ ամսական հարկման ենթակա եկամտի կազմի մեջ մտցվում է փոխհատուցման ընդհանուր գումարը՝ ինչպես անցած տարվա և ընթացիկ տարվա աշխատած մասի համար, այնպես և նախորդ տարիների համար վճարվող փոխհատուցումը:

Այն դեպքում, երբ օրենսդրության համապատասխան նախատեսվել է միացնել երկու կամ երեք աշխատանքային տարիների արձակուրդները, նախորդ տարիների չօգտագործված արձակուրդների փոխհատուցման գումարը ենթակա է հարկման ընթացիկ տարվա վարձատրությունից և արձակուրդայինից առանձին:

22. Այն գումարներից, որոնք հավելվում են աշխատավարձին ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջանային, բարձր լեռնային և այլ

գործակիցների, ինչպես նաև աշխատանքային ստաժի համար, հարկը գանձվում է առանձին՝ 12 տոկոս դրույքաչափով:

Այն դեպքերում, երբ սույն հրահանգի 1-ին բաժնում նշված պակասեցումները գերազանցում են հիմնական աշխատավարձին, իսկ գործակցի և վերադիրի հետ միասին աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը գերազանցում է նշված պակասեցումները, ապա հարկի հաշվարկը պետք է կատարվի հիմնական աշխատավարձի, գործակցի և վերադիրի ամբողջական գումարից:

Օրինակ.

Բարձր լեռնային տարածքում գտնվող ձեռնարկության աշխատողին, որն ունի մինչև 18 տարեկան հասակի չորս երեխաներ, հիմնական աշխատանքի վայրում հունվար ամսին հաշվարկվել է 2800 դրամ, այդ թվում հիմնական աշխատավարձ՝ 2000 դրամ, աշխատանքային ստաժի համար հավելում՝ 400 դրամ, գործակցով հաշվարկված գումար՝ 400 դրամ (ամսական նվազագույն աշխատավարձի չափը 375 դրամ):

Ընդհանուր եկամտի գումարից հարկվող եկամուտը կկազմի 550 դրամ, հարկը՝ 66 դրամ ($(2800-750-375 \times 4) \times 0,12$):

23. Այն դեպքերում, երբ աշխատանքի վարձատրության պայմաններին համապատասխան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարձատրությունը լրիվ չի վճարվում կամ առհասարակ չի վճարվել, իսկ վերջնական հաշվարկն իրականացվում է սեզոնի կամ այլ տևական ժամանակաշրջանի ավարտից հետո, վերջնական հաշվարկի դեպքում այդ վարձատրության գումարը հարկման նպատակով բաշխվում է այն ամիսների թվի վրա, որոնց ընթացքում աշխատելու համար կատարվում է աշխատանքի վարձատրությունը: Այդ դեպքում ամսվա ընթացքում տասնհինգ և ավելի օրեր աշխատելը ընդունվում է լրիվ ամիս:

Սույն կետում նախատեսված դրույթների կիրառման դեպքում վարձատրության կազմում չեն մտցվում և չեն բաշխվում համապատասխան ամիսների վրա աշխատողներին վճարված պարգևավճարները:

Սեզոնային բնույթի աշխատանքներ ունեցող ճյուղերում հարկման նպատակով սույն կարգով են բաշխվում նաև սեզոնի կամ տարվա ավարտից հետո ստացվող պարգևավճարները:

24. Լուծարվող ձեռնարկություններից, հիմնարկներից, կազմակերպություններից քաղաքացիների կողմից ստացվող եկամուտների գումարները (այդ թվում գույքի իրացումից ստացված) հարկվում են դրանց հաշվարկման ամսվա մյուս եկամուտների հետ միասին:

25. Վարձատրություններից և դրամական ու բնամթերային ձևով տրված մյուս եկամուտներից հարկը հաշվարկվում ու պահվում է այդ վճարումները կատարող գործատուների կողմից, որոնք պարտավոր են պահովել հարկի ճիշտ հաշվարկումն ու պահումը, հարկման ենթակա եկամտի պակասեցումները, ինչպես նաև պահված հարկի գումարի լրիվ և ժամանակին փոխանցումը բյուջե:

Այդ նույն կարգով հարկը հաշվարկվում, պահվում և փոխանցվում է ՀՀ տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ և օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններում, միջազգային կազմակերպություններում ու միավորումներում, օտարերկրյա ֆիրմաներում, բանկերում և դրանց առանձնացված ստորաբաժանումներում, ինչպես նաև համանման այլ մարմիններում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված վարձատրություններից:

26. Ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները բանկերում աշխատողներին վճարման ենթակա միջոցները ստանալու հետ միաժամանակ (սույն օրը) բյուջե են փոխանցում հաշվարկված հարկի գումարները, հանձնարարագրերում «ինչի համար» սյունակում առանձին նշելով վճարման անվանումը:

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված կանխիկ հասույթից, ինչպես նաև բնամթերային ձևով աշխատավարձ և այլ վճարումներ կատարող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները հաշվարկված հարկի գումարները բանկ են մուծում (բյուջե փոխանցում) վճարումների իրականացման հաջորդ օրը:

27. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից աշխատողների վարձատրություններից պահված հարկերը բյուջե են փոխանցվում լրիվ դրամներով՝ դրանց ընդհանուր գումարը 1000 դրամից ոչ պակաս լինելու դեպքում: Եթե հարկի գումարը 1000 դրամից պակաս է, ապա այն ավելացվում է հաջորդ ամսվա բյուջե փոխանցման ենթակա գումարին, բայց ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ից ոչ ուշ:

28. Աշխատանքի վարձատրության միջոցներ ստանալու չեկերը բանկի հիմնարկի կողմից վճարվում է միայն հարկը բյուջե փոխանցելու մասին հանձնարարագիրը ներկայացնելու դեպքում:

29. Եթե ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների հաշիվներում բավարար միջոցներ չկան աշխատավարձի վճարման և միաժամանակ աշխատողների վարձատրությունից պահված հարկի գումարը բյուջե փոխանցելու համար, ապա հարկերի գումարը բյուջե են փոխանցվում հաշիվներում միջոցների մնացորդների գումարներին համամասնորեն, որի մասին բանկի հիմնարկը վճարման հանձնարարագրում կատարում է գրառում:

Օրինակ. ձեռնարկությունը պետք է աշխատողներին վճարի 50000 դրամ և փոխանցի հարկ 6000 դրամ: Ձեռնարկության հաշվին կա 28000 դրամ, որի հարաբերությունը հաշվարկված վարձատրության նկատմամբ (հարկի հետ միասին) կազմում է 50 տոկոս ($28000:56000 \times 100$):

Այդ դեպքում աշխատանքի վարձատրության չեկը կազմվում է 25000 դրամի, իսկ հարկի

գումարի փոխանցման հանձնարարագիրը՝ 3000 դրամի համար: Հարկի մնացած գումարը (3000 դրամ) փոխանցվում է չվճարված վարձատրության մնացորդը (25000 դրամ) վճարելու համար միջոցներ ստանալու հետ միաժամանակ:

30. Աշխատավարձի վճարման սահմանված ժամկետների միջև ընկած ժամանակամիջոցում առանձին աշխատողների ամսվա ընթացքում վճարումներ կատարելիս (արձակուրդ մեկնելիս, կամ աշխատանքից ազատվելիս և այլն) հարկի գումարը փոխանցելու հանձնարարագրեր չեն ներկայացվում և այդ գումարները փոխանցվում են այդ նույն ձեռնարկության համար սահմանված հաջորդ ժամկետներում:

31. Արգելվում է քաղաքացիների վարձատրության գումարներից հաշվարկված հարկի գումարը վճարել ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների միջոցներից:

ԲԱԺԻՆ III

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Սույն բաժնի դրույթներին համապատասխան ենթակա են հարկման՝
ա) դրամական ու բնամթերային ձևով այն եկամուտները, որոնք ստանում են ձեռնարկություններից, հիմնարկներից, կազմակերպություններից դրանց հաստիքների մեջ չմտնող քաղաքացիները քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև համատեղության կարգով, միանվագ և այլ աշխատանքներ կատարելու համար:

Հեղինակային այն վարձատրությունները, որոնք ստացվում են քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա, հարկվում են սույն հրահանգի IV-րդ բաժնով սահմանված կարգով:

բ) կյուբական օգնության գումարները և կենսաթոշակների, նպաստների այն հավելումները, որոնք ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները վճարում են դրանցում չաշխատող քաղաքացիներին:

33. Սույն բաժնում թվարկված եկամուտներից հարկը հաշվարկվում և պահվում է սույն հրահանգի 16-րդ կետում սահմանված դրույթաչափերով:

34. Հարկի հաշվարկումը, պահումը և բյուջե փոխանցումը իրականացվում է այն ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից, որոնք կատարում են այդպիսի եկամուտների վճարումը՝ սույն հրահանգի II-րդ բաժնով սահմանված կարգով, առանց հարկման ենթակա եկամուտների պակասեցման (արտոնությունների վերապահման): Քաղաքացիների խնդրանքով ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են նրանց տալ հաշվարկված եկամուտների և պահված հարկերի վերաբերյալ տեղեկանք հարկային մարմիններին ներկայացնելու նպատակով:

ԲԱԺԻՆ IV

ՆԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Սույն բաժնում նախատեսված կարգով ու չափերով հարկվում են՝

ա) գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հեղինակները, նրանց ժառանգները (իրավահաջորդները)՝ ըստ հեղինակային վարձատրության գումարների, այդ ստեղծագործությունների ստեղծման, հրատարակման կամ այլ օգտագործման համար:

բ) գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների թարգմանությունների հեղինակները, նրանց ժառանգները (իրավահաջորդները)՝ ըստ հեղինակային վարձատրության գումարների:

գ) հայտնագործությունների, գյուտերի և արդյունաբերական սմուլշների հեղինակները, նրանց ժառանգները (իրավահաջորդները)՝ ըստ վարձատրության գումարների:

դ) գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները խմբագրող և գրախոսող ֆիզիկական անձինք՝ ըստ հեղինակային վարձատրության գումարների:

ե) մրցույթներում և մրցություններում մրցանակներ ստացած անձինք՝ ըստ ստացած դրամական մրցանակի:

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հեղինակային վարձատրություն ստացող մյուս ֆիզիկական անձինք՝ ըստ հեղինակային վարձատրության գումարների:

36. Սույն հրահանգի 35 կետում թվարկված ֆիզիկական անձանց վճարվող վարձատրությունների (բացառությամբ սույն հրահանգի 37 կետում նշված դեպքի) և դրամական մրցանակների գումարներից (այսուհետև՝ հեղինակային վարձատրություններ) հարկը գանձվում է հետևյալ դրույթաչափերով՝

ա) հիմնական աշխատանքի վայրի առկայության դեպքում:

Տարեկան եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև նվազագույն աշխատավարձի 120-ապատիկը ներառյալ	հարկվող գումարի 12 տոկոսը
նվազագույն աշխատավարձի 120-ապատիկը գերազանցող չափից մինչև 240-ապատիկը ներառյալ	նվազագույն աշխատավարձի 1440 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 120-

	ապատիկը գերազանցող գումարի 18 տոկոսը
Նվազագույն աշխատավարձի 240-ապատիկը գերազանցող չափից մինչև 480-ապատիկը ներառյալ	Նվազագույն աշխատավարձի 3600 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 240-ապատիկը գերազանցող գումարի 25 տոկոսը
Նվազագույն աշխատավարձի 480-ապատիկը գերազանցող չափից ավելի	Նվազագույն աշխատավարձի 9600 տոկոսին գումարած նվազագույն աշխատավարձի 480-ապատիկը գերազանցող գումարի 30 տոկոսը

բ) այն դեպքում, երբ ֆիզիկական անձը չունի հիմնական աշխատանքի վայր, սույն հրահանգի 35 կետում թվարկված վճարողները տարվա արդյունքներով հարկը վճարում են ինքնուրույնաբար այն հարկազուժարին հավասար չափով, որը համապատասխան թվով ամիսների համար վճարվում է սույն հրահանգի 16 կետում նշված դրույքաչափերով:

Սույն բաժնի 36 կետի «ա» ենթակետում նշված դրույքաչափերով է հարկը գանձվում նաև այն անձանցից, ովքեր իրենց ստեղծած գեղանկարչական, քանդակագործական, արվեստի մյուս տեսակների ստեղծագործությունները և զարդակիրառական արվեստի իրերն իրացնում են թանգարաններին, գեղարվեստական ֆոնդի կազմակերպություններին, ինչպես նաև ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից հատուկ հիմնվող վաճառք-ցուցահանդեսների միջոցով՝ ըստ այն եկամուտների, որոնք ստացվում են նշված կազմակերպություններից կամ ցուցահանդեսների տնօրինություններից:

37. Հեղինակների ժառանգներին (իրավահաջորդներին) կրկնակի (բազմակի) վճարվող վարձատրությունների գումարներից հարկը գանձվում է վճարման աղբյուրի մոտ 70 տոկոս դրույքաչափով:

38. Սույն բաժնում նշված ֆիզիկական անձանց եկամուտներից տարվա ընթացքում հարկը հաշվարկվում է և պահվում անմիջականորեն եկամտի վճարման վայրում՝ սույն բաժնի 36 կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերով անկախ եկամտի այլ աղբյուրներ (այդ թվում հիմնական աշխատանքի վայր) ունենալուց: Յուրաքանչյուր հաջորդ վճարման դեպքում կատարվում է հարկի վերահաշվարկ՝ ելնելով տվյալ վճարման վայրում ընթացիկ տարում կատարված վճարումների ընդհանուր գումարից:

39. ՀՀ կառավարությանն առընթեր հեղինակային իրավունքի ազգային գործակալության (ինչպես նաև համանման իրավասու այլ կազմակերպությունների) կողմից հեղինակային վարձատրություններ (այդ թվում արտասահմանից) վճարելիս հարկի պահումը իրականացվում է այդ գործակալության (համանման իրավասու կազմակերպության) կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

40. Տարին ավարտվելուց հետո ֆիզիկական անձինք (բացի հեղինակների ժառանգներից) պարտավոր են մարտի 1-ից ոչ ուշ իրենց բնակության վայրի հարկային մարմին ներկայացնել հայտարարագիր՝ անցած տարվա փաստացի եկամուտների մասին սույն հրահանգի N 3 հավելվածում բերված ձևով:

Սույն հրահանգի IV բաժնում նշված ֆիզիկական անձանց կողմից եկամուտների մասին հայտարարագիր կարող է չներկայացվել հետևյալ դեպքերում՝

ա) երբ օրացուցային տարվա ընթացքում վարձատրությունը ստացվում է մեկ անգամ կամ նույն վճարման վայրից՝ մի քանի անգամ:

բ) երբ օրացուցային տարվա ընթացքում ստացված վարձատրությունների ընդհանուր գումարը չի գերազանցում ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափը:

41. Գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների ստեղծման, հրատարակման, կատարման կամ այլ օգտագործման մասին պայմանագրերի առկայության դեպքում, այդ պայմանագրերի համաձայն որպես կանխավճար տրված և վերջնական հաշվարկի ժամանակ վճարված վարձատրությունները գումարվում են և հարկման նպատակով բաշխվում պայմանագրի գործողության տարիների թվի վրա:

Նման պայմանագրի բացակայության դեպքում հեղինակային վարձատրության գումարները, որոնք ստացվել են մի քանի տարիների ընթացքում կատարված աշխատանքների դիմաց և գերազանցում են ամսական նվազագույն աշխատավարձի 120-ապատիկը, վճարողի դիմումի համաձայն բաշխվում են ոչ ավելի, քան երեք տարվա վրա և հարկվում հարկով տարվա ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների կազմում՝ հանած նախկինում վճարված հարկի գումարը:

Համանման կարգ կիրառվում է վարձատրության այն գումարների նկատմամբ, որոնք հայտնագործությունների, գյուտերի և արդյունաբերական սմուլների հեղինակները ստանում են դրանց օգտագործման առաջին տարվա ընթացքում:

42. Սույն հրահանգի IV բաժնում նշված ֆիզիկական անձանց (բացի հեղինակների ժառանգների (իրավահաջորդների) համար սույն հրահանգի 37 կետում նշված դեպքի) եկամուտներից տարեկան հարկի վերջնական գումարը, սույն հրահանգով սահմանված կարգով, որոշվում է հարկ վճարողների կողմից և արտացոլվում տարեկան եկամուտների և այդ եկամուտների ստացմանն առնչվող ծախսերի մասին հայտարարագրում: Ընդ որում, եթե

նշված ծախսերը չեն հաստատվում փաստաթղթերով կամ հաստատվում են ոչ լրիվ, ապա դրանք հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմաներով: Եկամտի վճարման վայրում տարվա ընթացքում պահված հարկի գումարը հաշվի է առնվում վերջնահաշվարկի ժամանակ:

Հարկը հաշվարկվում է ըստ միջին ամսական եկամտի, սույն հրահանգի II բաժնի 16 կետի դրույքաչափերով, և բազմապատկվում 12-ով, եթե ստեղծագործական գործունեությունը (հեղինակային վարձատրությունը) եկամտի միակ աղբյուրն է, կամ ըստ տարեկան եկամտի՝ սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետով նախատեսված դրույքաչափերով, եթե այն եկամտի միակ աղբյուրը չէ:

Օրինակ 1. հիմնական աշխատանքի վայր ունեցող ֆիզիկական անձին հրատարակչությունում հրատարակված գրքի համար վճարվել է հեղինակային վարձատրություն, գումարով 90000 դրամ, որից այդ հրատարակչությունում պահվել է հարկ՝ 13500 դրամ (օրինակում ամսական նվազագույն աշխատավարձը պայմանականորեն ընդունվում է 375 դրամ):

Նույն ֆիզիկական անձին այլ հրատարակչությունում այդ նույն տարվա ընթացքում հոդվածի համար վճարվել է հեղինակային վարձատրություն, գումարով 20000 դրամ, և պահվել հարկ՝ 2400 դրամ:

Տարին ավարտվելուց հետո մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ֆիզիկական անձը հարկային մարմինն ներկայացրած հայտարարագրում նշում է վճարումների և պահված հարկերի գումարները, ինչպես նաև ստեղծագործության ստեղծման հետ կապված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 10000 դրամ:

Այդ դեպքում տարվա համար հարկի վերջնական հաշվարկը կատարվում է հետևյալ կարգով՝

ա) որոշվում է ստացված վարձատրությունների ընդհանուր գումարը՝ 110000 դրամ (90000 դրամ+20000 դրամ)։

բ) վարձատրության ընդհանուր գումարից հանվում է ստեղծագործությունների ստեղծման հետ կապված ծախսերը՝ 10000 դրամ:

Տվյալ դեպքում հարկվող եկամուտը կկազմի 100000 դրամ (110000 -10000)։

գ) սույն հրահանգի 36 կետի ա) ենթակետի դրույքաչափերով հարկի գումարը կկազմի 16000 դրամ (13500+10000x25%)։

դ) հաշվի առնելով հրատարակչություններում վարձատրությունների վճարման ժամանակ պահված հարկի գումարները, լրավճարման ենթակա հարկի գումարը կկազմի 100 դրամ /16000դր.- (13500դր.+2400դր.)/:

43. Ֆիզիկական անձանց վճարումներ կատարող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են ամեն տարի փետրվարի 1-ից ոչ ուշ իրենց գտնվելու վայրի հարկային մարմիններին գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած տարում վճարված գումարների մասին՝ նշելով նրանց մշտական բնակության վայրի հասցեները, և այդ եկամուտներից պահված հարկի գումարները: Տեղեկանքի ձևը բերված է սույն հրահանգի N 4 հավելվածով:

Հեղինակային վարձատրություններ վճարած ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գտնվելու վայրի հարկային մարմիններն այդ տեղեկությունները՝ հարկման նպատակով հաշվառման համար, վերահասցեագրում են եկամուտներ ստացողների մշտական բնակության վայրի հարկային մարմիններին:

44. Այն դեպքում, երբ տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի (կամ հարկ վճարողի կողմից կատարված հաշվարկի) համաձայն ենթակա է վճարման հարկի լրացուցիչ գումար, ապա այն կատարվում է հաջորդ տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

Եթե անհրաժեշտ է լինում բյուջեից վերադարձնել տարվա ընթացքում ավել վճարված հարկի գումարները, ապա հարկային մարմինների եզրակացության հիման վրա այդ գումարները պետք է վերադարձվեն բյուջեից՝ ոչ ուշ, քան այդ մասին հարկային մարմինն հայտնի դառնալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՅՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍՏԱՑԱԾ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

45. Հրահանգի սույն բաժնում նախատեսված կարգով ու չափերով հարկ են վճարում՝

ա) անհատ ձեռներեցները.

բ) անհատական (ընտանեկան) ձեռնարկության սեփականատերերը.

գ) ընկերակցության անդամ (փայլամասնակից) հանդիսացող ֆիզիկական անձինք.

դ) այլ անձինք, որոնք ստանում են սույն հրահանգի II, III և IV-րդ բաժիններում չթվարկված եկամուտներ:

46. Հրահանգի սույն բաժնով սահմանված կարգով և չափերով ենթակա են հարկման՝

ա) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները.

բ) փայլամասնակցությունից, արժեթղթերից, ավանդների դիմաց ստացված եկամուտները.

գ) վիճակախաղի տոմսերի դրամական շահույթները.

դ) գյուղացիական տնտեսությունների կողմից ոչ գյուղատնտեսական գործունեությունից

ստացված եկամուտները, եթե վերջիններիս գծով հասույթի (եկամտի) տեսակարար կշիռը ընդհանուր հասույթի (եկամտի) մեջ գերազանցում է 25 տոկոսը, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական այն ձեռնարկությունների սեփականատերերի եկամուտները, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հետ:

ե) ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի վաճառքից ստացված եկամուտները:

զ) գույքը (շենքեր, բնակարաններ, սենյակներ, ավտոտնակներ, ավտոմեքենաներ և այլն) վարձակալության տալուց ֆիզիկական անձանց ստացած եկամուտները:

47. Հարկման ենթակա եկամուտը հաշվարկվում է որպես ընդհանուր եկամտի և այդ եկամտի ստացման հետ կապված ծախսերի տարբերություն:

Եկամուտների ստացման հետ անմիջականորեն կապված ծախսերը հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքի մեջ մտցվող ծախսերի կազմի վերաբերյալ ընդհանուր նորմերը (ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծախսերի կազմը (ոչ սպառիչ) բերված է սույն հրահանգի N 5 հավելվածում):

Եթե ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծախսերը չեն հաստատվում փաստաթղթերով կամ հաստատվում են ոչ լրիվ, ապա դրանք հաշվարկվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմաներով:

48. Ծախսերի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում գործունեության առանձին բնագավառներում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության և իրացման ծախսերի կազմի առանձնահատկությունները, որոնք որոշվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

49. Հարկվող եկամտի որոշման ժամանակ հարկման ենթակա եկամուտը պակասեցվում է սահմանված կարգով սույն հրահանգի 6, 8, 9 և 11 կետերով նախատեսված պակասեցումների (արտոնությունների) չափով:

50. Սույն բաժնում նշված ֆիզիկական անձանց հարկվող եկամտից հարկը հաշվարկվում է՝

ա) հիմնական աշխատանքի վայրի առկայության դեպքում՝ սույն հրահանգի IV-րդ բաժնի 36 կետի «ա» ենթակետով նախատեսված դրույքաչափերով:

բ) հիմնական աշխատանքի վայր չունենալու դեպքում՝ սույն հրահանգի 16-րդ կետով նախատեսված դրույքաչափերով, պայմանով, որ այն հանդիսանում է եկամտի միակ աղբյուրը:

Օրինակ 1. ֆիզիկական անձը, որն ունի հիմնական աշխատանքի վայր, զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և տարվա ընթացքում ստացել է 28000 դրամ եկամուտ: Այդ եկամտի ստացման համար նա կատարել է փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, գումարով 12000 դրամ: Տարվա ընթացքում ֆիզիկական անձը կատարել է հարկի գծով կանխավճարային մուծումներ՝ 1800 դրամ (օրինակում ամսական նվազագույն աշխատավարձը պայմանականորեն ընդունվում է 375 դրամ):

Տարվա ընթացքում այդ անձը մարտ, ապրիլ, մայիս ամիսների ընթացքում ստացել է ավանդի դիմաց տոկոսներ, գումարով 20000 դրամ, որից բանկում պահվել է հարկ՝ 2400 դրամ:

Տարին ավարտվելուց հետո մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ֆիզիկական անձը հարկային մարմինն ներկայացնում է հայտարարագիր հաշվետու տարվա ընթացքում փաստացի ստացված եկամուտների, կատարված ծախսերի և աղբյուրի մոտ պահված հարկերի մասին:

Փաստացի եկամուտներից հարկը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

ա) որոշվում է տարեկան փաստացի ստացված եկամուտը՝ 48000 դրամ (28000+20000): Տվյալ դեպքում ավելացված արժեքի հարկ չի հաշվարկվում, քանի որ ԱՎՀ-ի գծով հարկման ենթակա գործունեությունից ստացված եկամուտը (հասույթը) չի գերազանցում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի 75-ապատիկը:

բ) որոշվում է հարկման ենթակա եկամուտը՝ 36000 դրամ (48000-12000).

զ) քանի որ ֆիզիկական անձը ունեցել է հիմնական աշխատանքի վայր, որտեղից ստացված եկամուտները յուրաքանչյուր ամսում պակասեցվել են սույն հրահանգի 6-9 և 11 կետերով նախատեսված պակասեցումների (արտոնությունների) չափով, տվյալ անձի համար հարկվող եկամուտ է հանդիսանում հարկման ենթակա եկամուտը՝ 36000 դրամը, որի նկատմամբ և կիրառվում է սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերը: Հարկի գումարը կազմում է 4320 դրամ:

դ) քանի որ ֆիզիկական անձը տարվա ընթացքում կատարել է եկամտահարկի գծով կանխավճարային մուծումներ՝ 1800 դրամ և վճարման աղբյուրի մոտ պահվել է 2400 դրամ, ապա տարվա արդյունքներով ենթակա է լրավճարման 120 դրամ:

Օրինակ 2. հիմնական աշխատանքի վայր չունեցող անհատ ձեռներեցը ամբողջ տարին զբաղված է եղել կոշիկի պատրաստմամբ և ստացել է 360000 դրամ եկամուտ: Նշված եկամտի ստացման համար կատարել է 180000 դրամի ծախս, որոնք հիմնավորված են փաստաթղթերով: Տարեկան զուտ եկամուտը ավելացված արժեքի հարկի հետ միասին կազմում է 180000 դրամ: Այնքանով, որ եկամուտը (360000 դրամը) գերազանցում է

հանրապետությունում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի 75-ապատիկ չափը ($375 \times 75 = 28125$), ուստի օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվում է ավելացված արժեքի հարկ, գումարով 27661 դրամ / $(360000 - 28125) : 360000 \times 180000 \times 16,67\%$:

Չուտ եկամուտը կազմում է 152339 դրամ (180000 - 27661):

Սոցիալական ապահովության մասհանումների գումարը կազմում է 15233 դրամ ($152339 \times 10\%$):

Հարկման ենթակա եկամուտը կկազմի 137106 դրամ ($152339 - 15233$):

Անհատ ձեռներեցը մասնակցել է օտարերկրյա պետություններում ծավալված մարտական գործողություններին և օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում է յուրաքանչյուր ամսում հարկման ենթակա եկամուտները ամսական նվազագույն աշխատավարձի 6-ապատիկ չափով՝ 2250 դրամով (375×6) պակասեցնելու իրավունքից: Բացի այդ, նա խնամքի տակ ունի երեք անչափահաս երեխա, որոնց հաշվով հարկման ենթակա եկամուտները յուրաքանչյուր ամսում պակասեցվում են նաև երեք ամսական նվազագույն աշխատավարձի չափով՝ 1125 դրամով (375×3):

Այսպիսով անհատ ձեռներեցի հարկվող եկամուտը կազմում է 96606 դրամ / $137106 - (2250 \times 12) + (1125 \times 12)$ /:

Հարկի որոշման նպատակով հարկվող եկամուտը բաժանվում է աշխատած ամիսների թվի վրա (12 ամիս) և որոշվում ամսական հարկվող եկամտի չափը, սույն հրահանգի 16 կետում նշված դրույքաչափերով հաշվարկված՝ 8051 դրամ, այնուհետև հաշվարկվում է ամսական հարկի գումարը՝ 1263 դրամ և այն բազմապատկվում է 12-ով՝ 15156 դրամ:

Այսպիսով, անհատ ձեռներեցի կողմից բյուջե վճարման ենթակա հարկերի գումարը կկազմի՝

ա) ավելացված արժեքի հարկ՝ 27661 դրամ, դուրս եկած կանխավճարների գումարը (եթե այդպիսիք վճարվել են).

բ) եկամտահարկ՝ 15156 դրամ, դուրս եկած կանխավճարների, ինչպես նաև մուծված եկամտահարկի նվազագույն վճարի գումարը (եթե այդպիսիք վճարվել են):

51. Հարկը հաշվարկվում է սույն բաժնում նշված վճարողների կողմից ստացված ընդհանուր տարեկան եկամուտներից՝ անկախ դրանց տեսակից:

Հարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է հարկ վճարողների կողմից ինքնուրույն և սահմանված կարգով արտացոլվում նրանց մշտական բնակության վայրի հարկային մարմնին ներկայացվող տարեկան եկամուտների և այդ եկամուտների ստացմանն առնչվող ծախսերի մասին հայտարարագրերում՝ սույն հրահանգի N 3 հավելվածում բերված ձևով:

Այն դեպքում, երբ սույն հրահանգի համաձայն ստացված եկամուտների մի մասի հարկումը սահմանված կարգով իրականացվում է եկամուտների վճարման վայրում, ապա տարվա ընթացքում պահված հարկի գումարները հաշվի են առնվում վերջնահաշվարկի ժամանակ:

52. Տարեկան եկամուտների մասին հայտարարագիր կարող է չներկայացվել այն ֆիզիկական անձանց կողմից, ովքեր եկամուտներ են ստանում միայն փայամասնակցությունից, արժեթղթերից և ավանդների դիմաց՝ մեկ ձեռնարկությունից, հիմնարկից, կազմակերպությունից, ինչպես նաև այն դեպքում, երբ տարվա ընթացքում ստացվում են միայն նշված կարգի եկամուտներ և որոնց ընդհանուր գումարը չի գերազանցում ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափը:

53. Հարկը վճարվում է հետևյալ կարգով՝

ա) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող հարկ վճարողները տարվա ընթացքում կանխավճարային ձևով յուրաքանչյուր եռամսյակ մուծում են նախորդ տարվա փաստացի եկամուտների հիման վրա հաշվարկված հարկի, իսկ առաջին անգամ հարկ վճարողները՝ ընթացիկ տարվա ենթադրվող եկամտից հաշվարկված հարկի տարեկան գումարի 25 տոկոսը:

Հարկի կանխավճարը հավասար մասերով մուծվում է բյուջե հետևյալ ժամկետներում՝ մինչև մարտի 15-ը, մինչև մայիսի 15-ը, մինչև օգոստոսի 15-ը և մինչև նոյեմբերի 15-ը:

Ընդ որում, մինչև նախորդ տարվա հարկի փաստացի գումարի վերջնահաշվարկի իրականացումը, հարկ վճարողը մինչև մարտի 15-ը վճարման ենթակա հարկի կանխավճարի չափը որոշում է ինքնուրույն՝ ելնելով ընթացիկ տարվա ֆինանսական ցուցանիշներից:

Փաստացի հարկի գումարը հայտնի դառնալուն հաջորդող մինչև մայիսի 15-ի կանխավճարային մուծման ժամանակ կատարում է կանխավճարների գումարների ճշտում տարվա սկզբից աճող հանրագումարով և սույն կետում նշված չափերով:

Տարվա ընթացքում վճարողի եկամուտը ավելանալու կամ պակասելու դեպքում կարող է կատարվել հարկի գումարների վերահաշվարկ՝ ըստ հարկի վճարման չհասած ժամկետների.

բ) տարին ավարտվելուց հետո հարկի տարեկան գումարը հաշվարկվում է ըստ փաստացի ստացված եկամտի: Այդ գումարի և տարվա ընթացքում վճարված գումարների տարբերությունը ենթակա է լրացուցիչ վճարման կամ վերադարձման՝ հաջորդ տարվա մայիսի 1-ից ոչ ուշ, իսկ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս եկամտի աղբյուրի գոյությունը դադարելու դեպքում՝ 15-օրյա ժամկետում:

54. Սույն հրահանգի 45 կետում նշված վճարողների հարկումը իրականացվում է՝

ա) տարվա արդյունքներով փաստացի եկամուտների մասին հայտարարագրերի հիման վրա, որոնք ներկայացվում են մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը:

Տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության գծով եկամտի աղբյուրի

առաջացման դեպքում ֆիզիկական անձինք եկամտի աղբյուրի առաջացման օրվանից մեկ ամիս հետո 5-օրյա ժամկետում հայտարարագիր են ներկայացնում, որտեղ նշում են գործունեության առաջին ամսվա փաստացի եկամտի և մինչև ընթացիկ տարվա վերջը ենթադրվող եկամտի չափը: Եկամտի աղբյուրը դադարելու դեպքում հայտարարագիրը տրվում է դադարելու օրվանից 5-օրյա ժամկետում:

բ) հարկային մարմինների կողմից վճարողների գործունեության ստուգումների, ուսումնասիրությունների (հետազոտությունների) նյութերի, վճարողների եկամուտների մասին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված մյուս տեղեկությունների հիման վրա:

55. Ֆիզիկական անձանց վճարումներ կատարող ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք պարտավոր են ամեն տարի փետրվարի 1-ից ոչ ուշ իրենց գտնվելու վայրի հարկային մարմնին գրավոր տեղեկություններ ներկայացնել այդ ֆիզիկական անձանց վճարված եկամուտների (բացառությամբ սույն հրահանգի II, III և IV բաժիններում թվարկված եկամուտների գումարների), պահված հարկերի և նրանց մշտական բնակության վայրի հասցեների մասին: Վճարումներ կատարող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց գտնվելու վայրի հարկային մարմինը այդ տեղեկություններն ուղարկում է ֆիզիկական անձանց մշտական բնակության վայրի հարկային մարմնին:

56. Փայամասնակցությունից, արժեթղթերից և ավանդների դիմաց ֆիզիկական անձանց եկամուտներից (դիվիդենտ, փայաբաժին, տոկոս) տարվա ընթացքում հարկը հաշվարկվում և պահվում է անմիջականորեն եկամտի վճարման վայրում՝ սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետի դրույքաչափերով: Յուրաքանչյուր հաջորդ վճարման դեպքում կատարվում է հարկի վերահաշվարկ՝ ելնելով տվյալ վճարման վայրում ընթացիկ տարում կատարված վճարումների ընդհանուր գումարից:

Ընդ որում, հարկի գումարը փոխանցվում է բյուջե՝ նշված եկամուտների վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

57. Սույն բաժնի դրույթներին համապատասխան է կատարվում նաև տնտեսական ընկերակցությունների փայամասնակից ֆիզիկական անձանց փայամասնակցությունից ստացված եկամուտների հարկումը:

Ընկերակցությունները հաշվետու տարվա ընթացքում հարկի կանխավճարային մուծումներ չեն կատարում:

Հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ից ոչ ուշ ընկերակցությունները իրենց գտնվելու վայրի հարկային մարմնին ներկայացնում են տեղեկություններ (սույն հրահանգի հավելված 6-ում բերված ձևով)՝ փայամասնակիցների եկամուտների մասին:

Ընկերակցության փայամասնակից ֆիզիկական անձինք ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում առանձին ներկայացնում են եկամուտների մասին անհատական հայտարարագիր՝ սույն հրահանգի N 3 հավելվածում բերված ձևով (հայտարարագիր ձև 1) կամ հավելված 7-ում (հայտարարագիր ձև 2) բերված ձևով, որի հիման վրա որոշվում են հարկման ենթակա եկամուտները:

58. Ընտանեկան ձեռնարկություն վարող համատեղ սեփականության իրավունքով անձանց հարկման ենթակա եկամուտների որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն յուրահատկությունը, որ, նախ՝ որոշվում է ամբողջ ընտանեկան ձեռնարկության հարկման ենթակա եկամուտը, երկրորդ՝ համաձայն ձեռնարկության կանոնադրության այն բաշխվում է ընտանիքի անդամների (սեփականատերերի) միջև, ինչը նշվում է եկամուտների մասին հարկային մարմնին մինչև հաջորդ տարվա փետրվարի 1-ը ներկայացվող տեղեկությունների մեջ (տեղեկանքի ձևը բերված է սույն հրահանգի հավելված 6-ում):

Ընտանիքի անդամները (սեփականատերերը) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնին առանձին ներկայացնում են եկամուտների մասին անհատական հայտարարագիր՝ սույն հրահանգի N 3 հավելվածում բերված ձևով (հայտարարագիր ձև 1):

Ընտանեկան ձեռնարկությունը հաշվետու տարվա ընթացքում հարկի կանխավճարային մուծումներ չի կատարում:

59. Անչափահաս անձանց (մինչև 18 տարեկան հասակի) եկամուտները հայտարարագրվում են նրանց ծնողներից որևէ մեկի կողմից (վերջիններիս ընտրությամբ) և ներառվում նրանց եկամուտների կազմում:

ԲԱԺԻՆ VI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՄՇԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԱՆՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԶԱՆՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետև՝ օտարերկրյա ֆիզիկական անձինք) հարկվող եկամուտը որոշվում է նույն կարգով, ինչպես և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հարկվող եկամուտը:

61. Անհատական ձեռնարկությունների (ընկերությունների) եկամուտները դիտվում են որպես նրանց սեփականատերերի եկամուտներ: Ընդ որում, հարկման նպատակով

անհատական ձեռնարկության (ընկերության) սեփականատեր չի համարվում օտարերկրյա այն ֆիզիկական անձը, որի սեփականությունում է գտնվում ցանկացած այնպիսի տնտեսական միավոր, որի եկամուտները նրա մշտական գտնվելու վայրի (գրանցման) երկրում ենթակա են հարկման կորպորացիայի շահույթից հարկով, կամ համանման այլ հարկով:

62. Հարկման ենթակա եկամտի կազմի մեջ չեն մտցվում այն գումարները, որոնք օտարերկրյա ֆիզիկական անձի գործատուն մասհանում է պետական սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ու զբաղվածության ֆոնդերին:

63. Օտարերկրյա ֆիզիկական անձանց եկամուտները ենթակա են հարկման համանման եկամուտները հարկելու համար սույն հրահանգով նախատեսված դրույքաչափերով, մասնավորապես անհատական ձեռնարկությունների (ընկերությունների) սեփականատերերի եկամուտները հարկման են ենթարկվում սույն հրահանգի 36 կետում նախատեսված կարգով:

64. Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող և Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա տարածքից դուրս գտնվող աղբյուրներից եկամուտներ ստացող օտարերկրյա ֆիզիկական անձինք ներկայացնում են եկամուտների մասին հայտարարագիր սույն հրահանգով սահմանված կարգով՝ հրահանգի N 7 հավելվածում բերված ձևով (հայտարարագիր ձև 2):

Փաստացի ստացված եկամուտների մասին հայտարարագիրը օտարերկրյա ֆիզիկական անձի գործունեության իրականացման կամ բնակության վայրի հարկային մարմնին ներկայացվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

Ընդ որում, հայտարարագրում արտացոլվում են (սույն հրահանգով սահմանված կարգով) ինչպես գործունեության իրականացման, այնպես էլ այլ վայրերից և աղբյուրներից ստացված եկամուտները:

Օտարերկրյա ֆիզիկական անձը, որը ժամանել է Հայաստանի Հանրապետություն, ժամանելու օրվանից մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է հայտարարագիր ընթացիկ տարվա ենթադրվող եկամուտների մասին (սույն հրահանգի համաձայն հայտարարագրման ենթակա եկամուտների համար): Եթե օտարերկրյա ֆիզիկական անձը ենթադրում է հաջորդ տարում Հայաստանի Հանրապետությունում գտնվել ընդհանուր առմամբ 183 օրը գերազանցող ժամանակաշրջանի կամ ժամանակաշրջանների ընթացքում, ապա նա հայտարարագիր է ներկայացնում հաջորդ ամբողջ օրացուցային տարվա սպասվելիք եկամուտների մասին:

Անհատական ձեռնարկությունների (ընկերությունների) սեփականատերերը եկամուտների մասին հայտարարագիրը ներկայացնում են սույն հրահանգի N 7 հավելվածում նշված ձևով:

Օրացուցային տարվա ընթացքում օտարերկրյա ֆիզիկական անձի գործունեությունը դադարելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում փաստացի ստացված եկամուտների մասին հայտարարագիրը պետք է տրվի ամենաուշը մեկ ամիս առաջ:

65. Եկամուտների մասին հայտարարագրերի հիման վրա օտարերկրյա ֆիզիկական անձանց հարկվող եկամուտներից հարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետությունում վճարողի մշտական բնակության վայրի հարկային մարմնի կողմից, իսկ եթե գործունեությունն իրականացվում է այլ վայրում, ապա հարկումը կատարվում է գործունեության իրականացման վայրի հարկային մարմնի կողմից, սակայն եկամուտների չափի և վճարված հարկի գումարների մասին պարտադիր կարգով հայտնելով Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ֆիզիկական անձի մշտական բնակության վայրի հարկային մարմնին: Հարկի վճարման համար փաստաթուղթ է հանդիսանում հարկային մարմնի կողմից վճարողին ուղարկվող վճարման ծանուցագիրը, որն ուղարկվում է փոստով կամ հանձնվում առձեռն (ծանուցագրի ձևը կցվում է սույն հրահանգի N 8 հավելվածում):

Ընդ որում, հրահանգի 64-րդ կետի 6-րդ պարբերության մեջ նշված դեպքում ծանուցագիրը դուրս է գրվում (հանձնվում է) հայտարարագիրը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում:

Ենթադրվող եկամուտների մասին հայտարարագրի հիման վրա վճարողին հաշվարկվում է հարկի կանխավճար, որը տարվա ընթացքում ենթակա է վճարման նրա հարկային պարտավորությունների 75 տոկոսի չափով: Հարկի կանխավճարների մուծման վերաբերյալ ծանուցագիրը ուղարկվում է (հանձնվում է առձեռն) հայտարարագիրը ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում: Հարկի գումարի վերահաշվարկը կատարվում է փաստացի եկամուտների մասին տվյալների հիման վրա:

Տարվա ընթացքում հարկի կանխավճարային մուծումները կատարվում են երեք հավասար մասերով՝ մինչև մայիսի 15-ը, մինչև օգոստոսի 15-ը և մինչև նոյեմբերի 15-ը:

Հաշվետու տարվա հարկի վերահաշվարկումից հետո լրավճարումը կատարվում է վճարման ծանուցագրի դուրս գրման (հանձնման) օրվանից մեկ ամսվա ընթացքում: Ավել վճարված հարկի գումարը վճարողի ցանկությամբ վերադարձվում է իրեն կամ հաշվանցվում առաջիկա վճարումների հաշվին:

66. Հարկման նպատակով օտարերկրյա ֆիզիկական անձանց եկամուտների պակասեցումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով և չափերով: Ընդ որում, օտարերկրյա ֆիզիկական այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ են ներկայացնում հայտարարագիր և ունեն երեխաների ու խնամառուների գծով պակասեցման իրավունք, արտոնության ստացման համար պարտավոր են ներկայացվող հայտարարագրերին կցել խնամառուների առկայությունը հաստատող համապատասխան փաստաթղթեր, որոնք պետք է վավերացված լինեն այն պետությունների իրավասու պետական մարմինների կողմից, որտեղ վճարողը մշտապես բնակվում էր մինչև Հայաստանի

Հանրապետություն ժամանելը: Իսկ այն դեպքում, երբ խնամքի տակ եղած անձինք բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, փաստաթղթերը ներկայացվում են սահմանված կարգով:

67. Հարկման ենթակա չեն օտարերկրյա ֆիզիկական անձանց հետևյալ եկամուտները՝

ա) օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի, ինչպես նաև դիվանագիտական անձնակազմի դիվանագիտական և հյուպատոսական աստիճան ունեցող անդամների, նրանց հետ համատեղ ապրող և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ընտանիքի անդամների բոլոր եկամուտները, բացի Հայաստանի Հանրապետությունում տարբեր աղբյուրներից ստացվող և դիվանագիտական ու հյուպատոսական ծառայության հետ կապ չունեցող եկամուտներից.

բ) դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի անդամների ու նրանց հետ համատեղ ապրող և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ընտանիքի անդամների բոլոր եկամուտները, բացի Հայաստանի Հանրապետությունում տարբեր աղբյուրներից ստացվող և դիվանագիտական ու հյուպատոսական ծառայության հետ կապ չունեցող եկամուտներից.

գ) դիվանագիտական ներկայացուցչության սպասարկող անձնակազմի այն անդամների ծառայության համար ստացած բոլոր եկամուտները, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն կամ մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում.

դ) միջազգային կազմակերպությունների աշխատակիցների եկամուտները՝ այդ կազմակերպությունների կանոնադրությունների դրույթների համապատասխան:

68. Օտարերկրյա ֆիզիկական անձանց եկամուտներից հարկի գանձումը կարող է դադարեցվել կամ սահմանափակվել փոխադարձության սկզբունքով այն դեպքում, երբ համապատասխան օտարերկրյա պետությունը նույնպիսի միջոցառումներ է իրականացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ, ինչը պետք է հավաստվի այդ պետության հարկային մարմինների կողմից:

ԲԱԺԻՆ VII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱՆԿԱՏՎՈՒՄՆԵՐԸ

69. Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն չունեցող անձանց եկամուտները ենթակա են հարկման միայն այն դեպքում, երբ դրանք ստացվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից վճարված, կամ ՀՀ տարածքում գտնվող սեփականության օգտագործման, կամ նրա օգտագործման իրավունքը տրամադրելու հետևանքով ստացված ցանկացած եկամուտները:

Մասնավորապես, այդպիսի եկամուտներին դասվում են՝ ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում ցանկացած աշխատանքի կատարումից, դերասանական կամ մարզական գործունեությունից ստացված եկամուտները, ինչպես նաև գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների ստեղծման, հրատարակման, կատարման կամ այլ ձևով օգտագործման, կամ օգտագործման իրավունքը տրամադրելուց ստացված եկամուտները, հայտնագործությունների, գյուտերի և արդյունաբերական սմուլների հեղինակների վարձատրությունը, լիցենզիաների գծով վճարումները, փայաբաժնի, դիվիդենտի կամ տոկոսի ձևով ստացված եկամուտները, ձեռնարկատիրական (առևտրային) գործունեությունից ստացված եկամուտները և համանման այլ եկամուտները:

70. Հրահանգի II և III բաժիններում նշված եկամուտներից հարկը պահվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ, այդ բաժիններում նշված կարգով՝ առանց սույն հրահանգում նշված հարկման ենթակա եկամուտների պակասեցման (առանց արտոնությունների տրամադրման):

Հայաստանի Հանրապետությունում գտնվող մյուս աղբյուրներից ստացված եկամուտներից հարկը նույն կարգով պահվում է վճարման աղբյուրի մոտ, 20 տոկոս դրույքաչափով (եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ) հետևյալ կարգով՝

ա) հարկը պահվում է ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության և որպես անհատ ձեռներեց գրանցված ֆիզիկական անձանց կողմից վճարվող ընդհանուր գումարից (այդ թվում՝ հանձնված ապրանքների դիմաց, կատարված աշխատանքների ու ծառայությունների համար և այլն):

Դրա հետ կապված, օտարերկրյա ֆիզիկական անձը կարող է դիմել (դիմումի ձևը կցվում է՝ հավելված N 9) ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության և որպես անհատ ձեռներեց գրանցված ֆիզիկական անձի գտնվելու վայրի հարկային մարմնին՝ այդ եկամուտների ստացման հետ առնչվող ծախսերի հաշվառման, հարկման ենթակա եկամտի որոշման և հարկի գումարի ճշտման նպատակով: Ընդ որում, հարկումը կատարվում է 20 տոկոս դրույքաչափով, առանց հաշվի առնելու պակասեցումները (արտոնությունները):

բ) երբ եկամուտները ձևավորվում են այլ աղբյուրներից (տոնավաճառ, շուկա և այլն), ապա ՀՀ-ում մշտական բնակություն չունեցող անձինք գործունեության իրականացման վայրի

հարկային մարմինն տալիս են հայտարարություն ընդհանուր եկամուտների և կատարված ծախսերի վերաբերյալ, որի հիման վրա կատարվում է հարկի հաշվարկ (հաշվարկի ձևը կցվում է՝ տես հավելված N 10):

Հարկման ենթակա եկամուտների որոշման համար սույն կետի «ա» և «բ» ենթակետերում նշված դեպքերում հարկային մարմինները հիմք են ընդունում եկամուտների և ծախսերի վերաբերյալ նրանց կողմից ներկայացվող համապատասխան փաստաթղթերը: Ծախսերին վերաբերվող փաստաթղթերի բացակայության դեպքում հարկման ենթակա եկամտի որոշման համար հիմք կարող են ընդունվել ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին հանձնված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների արժեքը: Դրանց բացակայության դեպքում, հարկման ենթակա եկամտի որոշման համար, կարող են հիմք ընդունվել ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրերում (ԲՄՀ) արտացոլված տվյալները, իսկ սահմանված դեպքերում՝ օտարերկրյա քաղաքացու հայտարարությունը ստացված եկամուտների վերաբերյալ և այլ տվյալներ:

Այն դեպքում, երբ առևտրային գործունեության ոլորտում փաստաթղթերով չի հիմնավորվում համախառն եկամուտը, ապա այն ընդունվում է ապրանքների ձեռք բերման գնի նկատմամբ ոչ պակաս 30 տոկոս վերադիրի չափով (դեկլարվելով ՀՀ կառավարության 1993թ. մայիսի 20-ի «Պետական գրանցում ստացած անհատ ձեռներեցների, անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների փաստաթղթերով չհաստատված ծախսերի տրամաների սահմանման մասին» թիվ 253 որոշմամբ): Իսկ եթե փաստաթղթերով հիմնավորվում է համախառն եկամուտը (հասույթը), սակայն չի հիմնավորվում ապրանքների ձեռք բերման գինը, ապա հարկման ենթակա եկամտի որոշման համար եկամտի մեկ դրամի ծախսը ընդունվում է 76,92 տոկոս:

Օրինակ 1. Օտարերկրյա պետության քաղաքացին Հայաստանի Հանրապետություն է ներկրել ապրանքներ և հանձնել առևտրական կազմակերպությանը: Այդ կազմակերպության կողմից վճարման ընդհանուր գումարից՝ 500000 դրամից պահվել է հարկ 20 տոկոս դրույքաչափով, որը կազմել է 100000 դրամ:

Հարկի գումարի ճշտման նպատակով հիշյալ անձը դիմել է կազմակերպության գտնվելու վայրի հարկային մարմին, սակայն չունի ապրանքների ձեռքբերման գնի և շրջանառության ծախսերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր: Տվյալ դեպքում նրա եկամուտը հաշվարկվում է ելնելով իրացման գումարից՝ 23,08%-ով, որը կկազմի 115400 դրամ ($500000 \times 23,08\%$), իսկ որպես շրջանառության ծախս՝ եկամտի գումարի 5%-ը (որը սահմանված է ՀՀ գործող օրենսդրությամբ) կամ 5770 դրամ ($115400 \times 5:100$): Հարկի գումարը կկազմի 21926 դրամ $/(115400 - 5770) \times 20:100/$: Ուստի ենթակա է վերադարձման 78074 դրամ ($100000 - 21926$):

Օրինակ 2. Իրանի Իսլամական հանրապետության քաղաքացին Հայաստանի Հանրապետություն է ներկրել ապրանքներ և վաճառել տոնավաճառում, որոնց ձեռք բերման և իրացման գնի վերաբերյալ չունի համապատասխան փաստաթղթեր: Քաղաքացու հայտարարությամբ իրացման գինը կազմել է 450000 դրամ, իսկ ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրում արտացոլվել է 480000 դրամ:

Տվյալ դեպքում քաղաքացու եկամուտը որոշվում է ելնելով ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրում նշված արժեքից 23,08 տոկոսով, որը կկազմի 110784 դրամ ($480000 \times 23,08:100$): Շրջանառության ծախս է ընդունվում եկամտի գումարի 5 %-ը (այնքանով, որ փաստաթղթերով հիմնավորված չեն նաև այդ ծախսերը) կամ 5539 դրամ ($110784 \times 5:100$): Հարկի գումարը կկազմի 21049 դրամ $/(110784 - 5539) \times 20:100/$:

71. Ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները և ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ֆիզիկական անձինք ՀՀ-ում մշտական բնակություն չունեցող անձանց վճարած եկամուտների և պահված հարկերի գումարների մասին մինչև վճարմանը հաջորդող ամսվա 15-ը հայտնում են իրենց գտնվելու վայրի հարկային մարմինն՝ սույն հրահանգի N 6 հավելվածում բերված ձևով:

72. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն չունեցող անձանց երկրի միջև առկա են համապատասխան հարկային համաձայնագրեր (միջազգային պայմանագրեր), որոնցում նշված են հարկման ենթակա եկամուտների պակասեցումների, ինչպես նաև հարկի վճարումներից լրիվ կամ մասնակի ազատվելու իրավունք, ապա կիրառվում է հետևյալ կարգը՝

ա) եթե ՀՀ-ում մշտական բնակություն չունեցող անձինք ունեն ՀՀ-ում գտնվող աղբյուրներից ստացված հարկման ենթակա եկամուտներից պակասեցումներ կատարելու իրավունք, ապա կարող են հարկը պահող ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության գտնվելու վայրի (իսկ այլ աղբյուրներից եկամուտների ստացման դեպքում՝ գործունեության իրականացման վայրի) հարկային մարմինն ներկայացնել դիմում սույն հրահանգի N 11 հավելվածում բերված ձևով: Դիմումը պետք է լրացված լինի երեք օրինակից և վավերացված դիմողի մշտական բնակության վայրի իրավասու հարկային մարմնի կողմից: Դիմումի երկու օրինակը ներկայացվում է ՀՀ հարկային մարմին: Հարկային մարմինը՝ ստուգելով դիմումում նշվածի համապատասխանությունը տվյալ երկրի հետ ունեցած համաձայնագրի դրույթներին, երկու օրինակի վրա կատարում է գրառում, օրինակներից մեկը վերադարձնում դիմողին և սահմանված կարգով բյուջեից վերադարձնում դիմումում նշված գումարը: Դիմումը պետք է

տրված լինի հարկի պահման օրվանից մինչև մեկ տարին լրանալը: Այն դիմումները, որոնք ներկայացվում են այդ ժամկետն անցնելուց հետո, քննարկման չեն ընդունվում:

բ) եթե Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն չունեցող անձինք ունեն ՀՀ-ում հարկի վճարումից լրիվ կամ մասնակիորեն ազատվելու իրավունք, ապա կարող են այդ մասին հարկային մարմնին ներկայացնել դիմում երեք օրինակից սույն հրահանգի N 11 հավելվածում բերված ձևով: Դիմումի երկու օրինակը ներկայացվում է ՀՀ-ում եկամուտների վճարման վայրի հարկային մարմնին: Հարկային մարմինը ստուգելով դիմումում նշվածի համապատասխանությունը նշված երկրի հետ ունեցած համաձայնագրի դրույթներին, երկու օրինակի վրա կատարում է գրառում և դրանք վերադարձնում դիմողին: Այդ օրինակներից մեկը դիմողը ներկայացնում է ՀՀ-ում (սույն հրահանգի II և III բաժիններում նշված) եկամուտներ վճարող ձեռնարկությանը, հիմնարկին, կազմակերպությանը: Դրա հիման վրա կատարվում է վճարողի լրիվ կամ մասնակի ազատումը ՀՀ-ում հարկի պահումից:

ԲԱԺԻՆ VIII

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

73. Սույն հրահանգում նշված դեպքերում և կարգով հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են ներկայացնել իրենց տարեկան եկամուտների և դրանց հետ կապված ծախսերի մասին հայտարարագիր (այսուհետև՝ հայտարարագիր):

Եկամուտների մասին տարեկան հայտարարագրի ձևը և հայտարարագրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

74. Հայտարարագիր կարող է չներկայացվել հետևյալ դեպքերում՝

ա) երբ ֆիզիկական անձանց եկամուտները ստացվում են միայն հիմնական աշխատանքի վայրից:

բ) երբ ֆիզիկական անձինք հեղինակային վարձատրություն են ստանում միայն սույն հրահանգի 40 կետում նշված պայմաններով:

գ) երբ ֆիզիկական անձինք եկամուտներ են ստանում դիվիդենդների, փայաբաժինների, տոկոսների տեսքով՝ միայն սույն հրահանգի 52 կետում նշված պայմաններում:

դ) երբ ֆիզիկական անձինք եկամուտներ են ստանում միայն հեղինակային վարձատրությունների ձևով (սույն հրահանգի 40 կետում նշված պայմաններով), դիվիդենդների, փայաբաժինների, տոկոսների տեսքով (սույն հրահանգի 52 կետում նշված պայմաններով) և հիմնական աշխատանքի վայրից:

75. Հայտարարագիր ներկայացնելուց չեն ազատվում այն ֆիզիկական անձինք, ովքեր իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն (անհատ ձեռներեցներ, անհատական (ընտանեկան) ձեռնարկություններ, տնտեսական ընկերակցություններ, սեփականատերեր), և այն անձինք, ովքեր եկամուտներ են ստանում գույքը վարձակալության տալուց, վիճակախաղի դրամական շահումներից, որոնց հարկային պարտականությունների ճշտությունն անմիջապես վերահսկվում է հարկային մարմնի կողմից:

Հայտարարագիր չներկայացնելը հարկ վճարողներին չի ազատում սույն հրահանգին և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերին համապատասխանող հարկային պարտավորությունները կատարելուց:

Այն դեպքում, երբ սույն հրահանգի 74 կետի «բ», «գ», «դ» ենթակետերով սահմանված կարգով ֆիզիկական անձանց կողմից հայտարարագիր չի ներկայացվում, սակայն այդպիսի եկամուտներ են ստացվում մի քանի աղբյուրներից, ապա նրանք պարտավոր են ինքնուրույնաբար կատարել հաշվարկներ և պարզել իրենց տարեկան հարկային պարտավորության գումարը: Լրացուցիչ վճարման ենթակա հարկի գումարի առաջացման դեպքում վերջիններիս կողմից այն բյուջե է մուծվում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

Ցանկության դեպքում նշված ֆիզիկական անձինք կարող են իրենց մշտական բնակության վայրի հարկային մարմնին ներկայացնել նաև հայտարարագիր:

76. Թեև սույն հրահանգի IV և V բաժիններում թվարկված ֆիզիկական անձինք իրենց ստացած եկամուտների և կատարած ծախսերի մասին ներկայացնում են հայտարարագիր N 3 հավելվածում բերված ձևով, սակայն նրանց հարկումը իրականացվելու է ըստ այդ բաժինների գծով ստացված եկամուտների ընդհանուր գումարից: Եկամուտների միացումը (կոնսոլիդացիան) կատարվելու է միայն ըստ առանձին բաժինների:

Օրինակ. ֆիզիկական անձը, որն ամբողջ տարին ունեցել է հիմնական աշխատանքի վայր (աշխատանքային պայմանագրով կատարել է աշխատանքներ) տարվա ընթացքում տարբեր աղբյուրներից ստացել է նաև՝

- հեղինակային վարձատրություն երեք տարբեր հրատարակչություններից՝

համապատասխանաբար 40000 դրամ, 30000 դրամ և 60000 դրամ և վճարման աղբյուրի մոտ պահվել է 4800 դրամ, 3600 դրամ և 7920 դրամ հարկ:

- փայամասնակցությունից եկամուտ, գումարով 70000 դրամ, որից վճարման աղբյուրի մոտ պահվել է հարկ, գումարով 9720 դրամ:

- եկամուտ ավանդի դիմաց (տոկոսի ձևով), գումարով 30000 դրամ, որից վճարման աղբյուրի մոտ պահվել է հարկ, գումարով 3600 դրամ:

- վիճակախաղի տոմսերի դրամական շահում, գումարով 10000 դրամ:

- գույքը վարձակալության տալուց եկամուտ, գումարով 12000 դրամ:

Ամսական նվազագույն աշխատավարձի չափը պայմանական 400 դրամ է:

Հայտարարագրում ֆիզիկական անձը ցույց է տվել նաև կատարված ծախսերը, որոնք հիմնավորված են փաստաթղթերով՝

ա) ստեղծագործությունների հետ կապված՝ 2000 դրամ.

բ) գույքը վարձակալության տալու հետ կապված՝ 2000 դրամ:

Այսպիսով, վերջնական հաշվարկի հիման վրա հարկի գումարը որոշվում է հետևյալ կարգով՝

ա) հեղինակային վարձատրությունների գծով.

-որոշվում է տարվա ընթացքում վճարված հեղինակային վարձատրությունների ընդհանուր գումարը՝ 130000 դրամ (40000+30000+60000).

-վարձատրության ընդհանուր գումարից (130000 դրամ) հանվում է ստեղծագործությունների ստեղծման հետ կապված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 10000 դրամ:

Տվյալ դեպքում հարկվող եկամուտը կկազմի 120000 դրամ (130000-10000):

Սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետի դրույքաչափերով հարկի գումարը կկազմի 20400 դրամ (14400+24000x25:100):

Հաշվի առնելով հրատարակչությունում վարձատրությունների վճարման ժամանակ պահված հարկի ընդհանուր գումարը՝ 16320 դրամ (4800+3600+7920), լրավճարման ենթակա հարկի գումարը կկազմի 4080 դրամ (20400-16320).

բ) ձեռնարկատիրական և այլ գործունեության գծով.

-որոշվում է տարվա ընթացքում վճարված և ստացված եկամուտների ընդհանուր գումարը՝ 122000 դրամ (70000 + 30000 + 10000 + 12000).

-եկամտի ընդհանուր գումարից (122000 դրամ) հանվում է այդ եկամուտների ստացման հետ կապված ծախսերը՝ 2000 դրամ, որոնք հաստատված են փաստաթղթերով.

Որոշվում է հարկվող եկամտի ընդհանուր գումարը, որը կազմում է 120000 դրամ (122000-2000):

Սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետի դրույքաչափերով հարկի գումարը կկազմի 20400 դրամ (14400+24000x25:100):

Հաշվի առնելով այդ եկամուտների վճարման ժամանակ պահված հարկի գումարները՝ 13320 դրամ (9720+3600), լրավճարման ենթակա հարկի գումարը կկազմի 7080 դրամ (20400-13320):

ԲԱԺԻՆ IX

ԿՐԿԼԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓՈՒՄԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

77. Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացված եկամտի գումարները մտցվում են Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա եկամտի ընդհանուր գումարի մեջ և հաշվի են առնվում հարկի չափը որոշելիս:

Հայաստանի Հանրապետությունում գանձվող հարկը նվազեցվում է հարկի այն գումարի չափով, որը Հայաստանի Հանրապետության վճարողներից գանձվել է օտարերկրյա պետություններում դրանց օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, նվազեցվող գումարի չափը (հաշվանցումը) չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից Հայաստանի Հանրապետությունում վճարման ենթակա հարկի գումարներին:

Հաշվանցումը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե քաղաքացին ներկայացնում է օտարերկրյա պետությունների համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված եզրակացությունը:

Օրինակ 1. Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն և հիմնական աշխատանքի վայր ունեցող քաղաքացին ԱՄՆ-ում դասախոսություն կարդալու համար ստացել է վարձատրություն 5000 ԱՄՆ դոլարով, որը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած արժուրային կուրսով կազմում է 2000000 դրամ (1 ԱՄՆ դոլարը պայմանական 400 դրամ), որից ԱՄՆ-ում պահվել է հարկ գումարով 1200 դոլար, որը համարժեք է 480000 դրամի:

ա) սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերով (ամսական նվազագույն աշխատավարձը 400 դրամ) 2000000 դրամից հարկը կազմում է 580800 դրամ.

բ) ԱՄՆ-ում վճարված հարկի հաշվանցումից հետո հարկի վերջնական գումարը կազմում է 100800 դրամ (580800-480000):

Օրինակ 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացին հաշվետու տարում ՀՀ-ում գտնվող աղբյուրներից ստացել է հեղինակային վարձատրություն, գումարով 100000 դրամ: Այս դեպքում սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերով տարվա ընթացքում վճարման աղբյուրի մոտ Նրանից պահվել է հարկ, գումարով 15400 դրամ (ամսական նվազագույն աշխատավարձը 400 դրամ): Նույն տարում նա Հնդկաստանից ստացել է հեղինակային վարձատրություն 500 ԱՄՆ դոլարի չափով կամ 200000 դրամ (1 ԱՄՆ դոլարը պայմանական՝ 400 դրամ): Հնդկաստանում եկամտի վճարման ժամանակ պահվել է հարկ 25 տոկոս դրույքաչափով, գումարով 125 ԱՄՆ դոլար կամ 50000 դրամ: Հայաստանի Հանրապետությունում հարկման նպատակով քաղաքացին պարտավոր է հայտարարագրել հեղինակային վարձատրության ընդհանուր գումարը, որը ստացվել է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Հնդկաստանում գտնվող աղբյուրներից:

Հնդկաստանում հարկի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը իրեն մշտական բնակության վայրի հարկային մարմինն ներկայացնելու դեպքում, ՀՀ-ում վճարման ենթակա հարկի գումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կարգով.

Հեղինակային վարձատրության գծով քաղաքացու ընդհանուր եկամուտը կազմել է 300000 դրամ (100000 դրամ ՀՀ-ում և 200000 դրամ Հնդկաստանում):

Ընդհանուր եկամտից հաշվարկվող հարկի գումարը սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետի դրույքաչափերով կազմում է 70800 դրամ: Կրկնակի հարկումից խուսափելու նպատակով որոշվում է Հնդկաստանում վճարված եկամտից հարկի չափը, որը կարող է հաշվանցվել ՀՀ-ում հարկային պարտավորությունների որոշման ժամանակ: Դրա համար Հնդկաստանում ստացված եկամտի (200000 դրամ) նկատմամբ կիրառվում է սույն հրահանգի 36 կետի «ա» ենթակետի դրույքաչափերը: Հարկի գումարը կկազմի 40800 դրամ:

Այսպիսով, հաշվանցման գումարը չի կարող գերազանցել 40800 դրամից: ՀՀ-ում վճարման ենթակա հարկի վերջնական գումարը որոշվում է որպես քաղաքացու ընդհանուր եկամտից ՀՀ-ում հաշվարկված հարկի գումարի, ՀՀ-ում հեղինակային վարձատրության վճարման ժամանակ պահված հարկի գումարի և կրկնակի հարկումից խուսափելու նպատակով հաշվանցման ենթակա հարկի միջև տարբերությունը կամ 14600 դրամ (70800 դրամ-15400 դրամ-40800 դրամ):

78. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով) սահմանված են այլ կանոններ, քան պարունակվում են սույն հրահանգում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով) սահմանված կանոնները:

Նշված կանոնները գործում են Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից վերոհիշյալ պայմանագրերը վավերացնելուց հետո:

ԲԱԺԻՆ X

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

79. Ֆիզիկական անձինք, որոնց եկամուտները ենթակա են հարկման եկամուտների և ծախսերի մասին հայտարարագրի հիման վրա, պարտավոր են.

ա) տանել օրացուցային տարում իրենց կողմից ստացված եկամուտների և այդ եկամուտների ստացման հետ կապված ծախսերի հաշվառում:

Ձեռնարկատիրական գործունեությամբ չգբաղվող ֆիզիկական անձինք եկամուտների և ծախսերի հաշվառումը վարում են իրենց կողմից ընտրված ձևով (ապահովելով բոլոր գործառնությունների հետ կապված փաստաթղթերը):

Ձեռնարկատիրական գործունեությունից (բացառությամբ մանրածախ առևտրի և հասարակական սննդի ոլորտի) եկամուտներ ստացող ֆիզիկական անձինք պարտավոր են վարել եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք հետևյալ ձևով.

Հաշվառման ժամանակաշրջանը (օր, շաբաթ, ամիս, տարի)	Պատ-րաստված արտա-դրանք-ների (մատուցված ծառայու-թյուն-ների) քանակը	Պատ-րաստված արտա-դրանք-ների (մատուցված ծառայու-թյունների) վրա կատարված ծախսերը	Իրացված արտա-դրանքնե-րի (մատուցված ծառայու-թյունների) քանակը	Իրացված արտա-դրանքնե-րի (մատուցված ծառայու-թյունների) միջին գինը (դրամ, լումա)	Հասույթի կամ եկամտի գումարը (դրամ, լումա)	Չուտ եկամուտը (հարկման ենթակա եկամուտը՝ հասույթ հանած ծախսեր) (դրամ, լումա)
1	2	3	4	5	6	7
Ընդամենը տարվա համար						

Մանրածախ առևտրի և հասարակական սննդի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռներեցի եկամուտների և ծախսերի հաշվառումը իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության 1994թ. մարտի 31-ի թիվ 08003 և ՀՀ հարկային պետական տեսչության 1994թ. ապրիլի 11-ի թիվ 1052/3-2գ համատեղ նամակով սահմանված կարգով՝ վարելով մուտքի և ելքի գլխավոր գիրք:

Ֆիզիկական անձինք, ովքեր զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ սոցիալ-կուլտուրական ոլորտում, պարտավոր են գրքում լրացուցիչ արտացոլել հաճախորդների, բուժվող հիվանդների, սովորողների ազգանուններն ու բնակության վայրը:

Տեսրերի, բլոկնոտների և այլնի ձևով գրքերը ձեռք են բերվում ֆիզիկական անձանց կողմից:

Հարկային մարմինները պարտավոր են համարակալել, ժապավենել և կնիքով վավերացնել գրքերը:

Եկամուտների և ծախսերի հաշվառման գրքերի վարման ճշտությունը ստուգվում է հարկային մարմինների կողմից՝ հայտարարագրի մեջ արտացոլված եկամուտների և ծախսերի ճշտության ստուգման, ինչպես նաև նրանց գործունեության հետազոտություններ (ուսումնասիրություններ) անցկացնելու ժամանակ:

Հարկման ենթակա եկամտի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում, և հետևաբար, եկամուտների և ծախսերի հաշվառման գրքում չեն արտացոլվում հետևյալ ծախսերը՝

- հարկատուի և նրա ընտանիքի անձնական կարիքների վրա (բնակարանի վարձման, պահպանման և նորոգման) և դրանց հավասարեցված այլ ծախսեր, որոնք կապված չեն եկամտի ստացման հետ.

- հարկերի, բացի ավելացված արժեքի հարկից և ակցիզային հարկից, գանձույթների, ապահովագրության վճարումների գումարները և տուգանքները:

Շինությունները, բնակարանները և մյուս շարժական ու անշարժ գույքը վարձակալության տված ֆիզիկական անձինք պարտավոր են հաշվի առնել վերը նշված գույքի ինչպես դրամական, այնպես էլ բնամթերային ձևով ստացված վարձակալական վճարի չափը:

Վարձակալությամբ տրված գույքից, որոնք գտնվում են մեկ կամ մի քանի անձանց սեփականության կամ տնօրինության տակ, ստացված եկամուտները հաշվի են առնվում այն անձանց մոտ, ում սեփականության կամ տնօրինման տակ գտնվում է տվյալ գույքը:

Մեկուսացված շինությունները վարձակալության տալու դեպքում, ծախսերի կազմում հաշվի են առնվում նաև ջեռուցման և լուսավորության ծախսերը:

Գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների ստեղծման, հրատարակման կամ այլ օգտագործման, ինչպես նաև հայտնագործությունների, գյուտերի և արդյունաբերական նմուշների համար վարձատրություններ ստացող ֆիզիկական անձինք տանում են հաշվառում ընթացիկ տարում ստացված եկամուտների և վճարման աղբյուրի մոտ պահված հարկերի վերաբերյալ, ինչպես նաև հաշվի են առնվում ծախսերը՝ կապված այս կամ այն կոնկրետ ստեղծագործության հետ: Հաշվառումը տարվում է ցույց տալով վարձատրության վճարման կոնկրետ վայրը և ամսաթիվը:

Եկամուտների և ծախսերի հաշվառման վերաբերյալ տարվա ամփոփ տվյալները, որոնք կապված են եկամուտների ստացման հետ, ինչպես նաև այդ եկամուտներից պահված հարկերի գումարները հիմք են ընդունվում ֆիզիկական անձանց կողմից եկամուտների մասին հայտարարագիրը լրացնելու համար.

բ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հարկային մարմիններին ներկայացնել եկամուտների և ծախսերի մասին հայտարարագիր և այլ փաստաթղթեր ու տվյալներ, որոնք հավաստում են հայտարարագրում և այլ հաշվարկներում նշված տվյալների իսկությունը.

գ) ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին և հարկային մարմիններին ներկայացնել փաստաթղթեր, որոնք հավաստում են հարկման ենթակա եկամուտների պակասեցման իրավունքը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր և տվյալներ:

Այն դեպքում, երբ հարկ վճարողները չունեն հիմնական աշխատանքի վայր, ապա սույն հրահանգի 6, 8, 9 և 11 կետերով նախատեսված հարկման ենթակա եկամտի պակասեցումները (արտոնությունները) կարող են կիրառվել վճարողի ցանկությամբ և նրա դիմումի համաձայն (դիմումի ձևը բերված է սույն հրահանգի հավելված N 12-ում) հարկային մարմինների կողմից:

դ) ժամանակին և ամբողջությամբ բյուջե վճարել հարկվող եկամուտներից հաշվարկված հարկերը, որոնք բխում են հայտարարագրից: Հայտարարագիր չներկայացնելու դեպքում հարկի հաշվարկումը կատարվում է ինքնուրույնաբար.

ե) թույլատրելի հարկային մարմինների պաշտոնատար անձանց մուտքը շինություններ և այլ տեղեր, որոնք օգտագործվում են եկամուտներ ստանալու համար:

80. Ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները պարտավոր են՝

ա) ապահովել հարկի ժամանակին ու ճիշտ հաշվարկումն ու փոխանցումը բյուջե.

բ) ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և պահված հարկերի մասին տեղեկություններ ներկայացնել հարկային մարմիններին (բացառությամբ սույն հրահանգի II և III բաժիններում թվարկված անձանց եկամուտների և հարկերի)՝ սույն հրահանգի N 6 հավելվածում բերված ձևով:

81. Պայմանագրերի կամ այլ գործարքների կնքման ժամանակ արգելվում է նրանցում ներառել այնպիսի հարկային պայմանավորվածություն, համաձայն որի եկամուտ վճարող ձեռնարկությունը իր վրա է վերցնում քաղաքացիների հարկային պարտավորությունների հետ կապված ծախսերը:

ԲԱԺԻՆ XI

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

82. Հարկային մարմինները պարտավոր են ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, անկախ նրանց կազմակերպական-իրավական տեսակից, անցկացնել հարկի պահման, պակասեցումների (արտոնությունների) կիրառման, պահված հարկի գումարների ժամանակին և լրիվ բյուջե փոխանցման ճշտության ստուգումներ: Հարկերի հաշվարկման ճշտությունը պետք է ստուգվի ընտրանքային կարգով աշխատողների

անձնական հաշիվների, աշխատավարձի վճարման տեղեկագրերի, եկամտի վճարման այլ փաստաթղթերի հիման վրա: Ընդ որում, Էական սխալներ հայտնաբերելու դեպքում ստուգման են ենթարկվում բոլոր անձնական հաշիվները և այլ փաստաթղթերը:

83. Հարկերի պահման գծով ստուգման ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների ցանկը, ստուգման կոնկրետ ժամկետների նշումով, հաստատվում է հարկային մարմնի ղեկավարի կողմից:

84. Հարկի ժամանակին և լրիվ փոխանցումների հետ կապված ստուգումների ժամանակ հարկային մարմինների աշխատողները պարտավոր են՝

- ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների հաշվարկած հարկի գումարների մասին հաշվապահական հաշվառման գրանցումները («Հաշվարկներ բյուջեի հետ» հաշվի համապատասխան ենթահաշիվը) համեմատել աշխատավարձի տեղեկագրերով և այլ փաստաթղթերով պահված հարկի ընդհանուր գումարի հետ: Ստուգման ժամանակ բոլոր փաստաթղթերի ներկայացրած լիները պարզաբանելու համար անհրաժեշտ է այդ փաստաթղթերով հաշվարկված հարկի գումարը համեմատել հաշվապահական հաշվառման («Հաշվարկներ անձնակազմի հետ՝ աշխատավարձի վճարումների գծով», «Հաշվարկներ անձնակազմի հետ՝ այլ գործառնությունների գծով», «Հաշվարկներ հաշվետու անձանց հետ» և «Դրամարկ») հաշիվների տվյալների հետ, աշխատավարձի տեղեկագրերում ընտրանքային կարգով հաշվարկել վճարված աշխատավարձից պահված հարկի ամփոփ գումարի ճշտությունը.

- ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների հաշվապահության գործերում արտացոլված բյուջե մուտք եղած հարկի գումարի տվյալները համեմատել վճարման հանձնարարագրերի պատճենների օրինակների հետ՝ բանկի հիմնարկի նշումով այն մասին, որ հանձնարարագիրը ընդունվել է կատարման, ինչպես նաև բյուջե հարկի գումարի փոխանցման մասին հաշվապահական հաշվառման տվյալների հետ.

- բյուջե մուտք եղած հարկի գումարների մուտքերի և ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ տարբերություններ հայտնաբերելու դեպքում, բանկում կատարել հարկի փոխանցման վերաբերյալ վճարման հանձնարարագրերի տվյալների ստուգում:

85. Ստուգման արդյունքների վերաբերյալ կազմվում է ակտ սույն հրահանգի N 13 հավելվածում բերված օրինակելի ձևով:

Հարկի չփոխանցված գումարները հաշվարկված տույժերի հետ միասին ձեռնարկություններից, հիմնարկներից, կազմակերպություններից գանձվում է անվիճելի կարգով:

86. Հարկի հաշվարկման և բյուջե վճարման նկատմամբ հսկողություն իրականացնելու ժամանակ հարկային մարմինները պարտավոր են ղեկավարվել «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ Նախագահի 1994թ. օգոստոսի 1-ի հրամանագրի և ՀՀ օրենսդրական այլ ակտերի, ինչպես նաև սույն հրահանգի համապատասխան դրույթներով:

87. Հարկային մարմինների կողմից ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների նկատմամբ հսկողությունը իրականացվում է՝

ա) սահմանված ժամկետներում հարկային մարմիններին ներկայացվող եկամուտների և ծախսերի մասին հայտարարագրերի, նրանցում նշված տվյալների հավաստիությունը հաստատող մյուս փաստաթղթերի և տեղեկությունների, ինչպես նաև եկամուտների ու ծախսերի հաշվառման, մուտքի և ելքի գլխավոր գրքի տվյալների հիման վրա.

բ) ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա.

գ) ֆիզիկական անձանց գործունեության ուսումնասիրությունների (հետազոտությունների) նյութերի և վճարողների եկամուտների մասին եղած մյուս տեղեկությունների հիման վրա:

Այն դեպքերում, երբ ֆիզիկական անձը հրաժարվում է թույլատրել կատարելու իր գործունեության ստուգում, ուսումնասիրություն (հետազոտություն) հարկային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք ունեն այդպիսի անձանց հարկման ենթակա եկամուտը որոշել նրանց եկամուտների ստացման մասին վկայող փաստաթղթերի հիման վրա, և հաշվի առնել նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ անձանց հարկման տվյալները:

88. Հարկային մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են հսկել ֆիզիկական անձանց կողմից եկամուտների մասին հայտարարագրերի ժամանակին ներկայացումը և կատարել մանրակրկիտ ստուգում հարկային մարմիններում ունեցած նյութերի, եկամուտների և պահված հարկերի, ինչպես նաև ձեռնարկություններից, հիմնարկներից և կազմակերպություններից ստացված տեղեկությունների հիման վրա:

Ֆիզիկական անձանց հարկման ենթակա եկամուտների ստուգումը, ուսումնասիրությունը (հետազոտությունը) հարկային մարմինների աշխատողները կատարում են տարվա ընթացքում ոչ պակաս երկու անգամ, իրենց ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում:

Հարկային մարմինները պարտավոր են կատարել ֆիզիկական անձանց գործունեության ուսումնասիրություն, որոնց վերաբերյալ կան ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում աշխատելու հետ չկապված եկամուտների ստացման տեղեկություններ:

Հարկման ենթակա եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց հայտնաբերման

նպատակով հարկային մարմինները ստուգումներ են իրականացնում նաև նրանց կողմից պատրաստված ապրանքների կամ մատուցված ծառայությունների իրացման վայրերում:

89. Հարկային մարմինները, ֆիզիկական անձանց գործունեության ուսումնասիրության ժամանակ, պարզում են աշխատանքի պայմանները, հումքի պաշարները և պատրաստի արտադրանքի վաճառքը, ծառայությունների և ապրանքների պահանջարկը, բացահայտում են արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների քանակը, ապրանքների վաճառքի գինը կամ ծառայությունների համար վճարների չափը, պատրաստի ապրանքների առկայությունը, հումքի (նյութերի) արժեքը և գործունեության հետ կապված մյուս ծախսերը:

Այդ դեպքում, որպես հսկիչ տվյալներ, օգտագործվում են նաև`

ա) համապատասխան ձեռնարկությունների հումքի և նյութերի ծախսերի նորմաների տեղեկությունները.

բ) ապրանքների գների, աշխատանքների և ծառայությունների արժեքի և այլնի մասին պատվիրատուների, մյուս ֆիզիկական անձանց տեղեկությունները.

գ) նախորդ ստուգումների նյութերը.

դ) ապրանքների (գույքի) ձեռքբերման համար ֆիզիկական անձանց վճարված գումարների մասին ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների տվյալները:

Հարկային մարմինները պետք է վճարողի տվյալները համեմատեն ստուգման տվյալների հետ, և էական տարբերությունների դեպքում պարզեն դրա պատճառները:

Աշխատանքային օրվա տևողության և աշխատանքի ծանրաբեռնվածության մասին վճարողի հայտարարությունը պարտադիր ստուգվում է օրվա տարբեր ժամերին ֆիզիկական անձի գործունեության վայրը մշտապես հաճախելու, պատրաստի ապրանքների և պատվերների առկայությունը վեր հանելու ճանապարհով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ ստուգումներ, ուսումնասիրություններ (հետազոտություններ) կատարվում են նաև տվյալ գործունեությամբ զբաղվողի ընտանիքի անդամների մասնակցության բացահայտման, ինչպես նաև արտադրանքի վաճառքի գնի կամ աշխատանքի վարձատրության որոշման համար, իսկ աշխատանքից հետո ազատ ժամանակ գործունեությամբ զբաղվողների համար` ձեռնարկությունում զբաղվածության տևողությունը որոշելու համար:

90. Եթե վճարողի գործունեության ուսումնասիրության ժամանակ հաստատվում է, որ եկամուտների և ծախսերի հաշվառման մուտքի և ելքի գլխավոր գիրքը սխալ է վարվում կամ նրանում հաշվի չեն առնված հարկման ենթակա բոլոր եկամուտները և դրանց հետ կապված ծախսերը, ապա հարկային մարմինը պարտավոր է պահանջել հարկատուից համապատասխան փոփոխություններ մտցնել այդ գրքում: Եշված պահանջների չկատարման դեպքում եկամուտների և ծախսերի հաշվառման գրքում (մուտքի և ելքի գլխավոր գրքում) ցույց տրված տվյալները չեն ընդունվում, իսկ հարկերի գանձումը կատարվում է ուսումնասիրությունների (հետազոտությունների) արդյունքների հիման վրա:

91. Ֆիզիկական անձանց գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա տեղում կազմվում է ակտ սույն հրահանգի N 14 հավելվածում բերված ձևով: Իսկ ուսումնասիրություն (հետազոտություն) կատարելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն կամ տեղեկանք:

Ստուգման, ուսումնասիրության (հետազոտության) արդյունքների հիման վրա հարկային մարմնի պաշտոնատար անձը ընդունում է համապատասխան որոշում:

ԲԱԺԻՆ XII

ԺԱՍԱՆԱԿԻՆ ՉՍՈՒԾՎԱԾ ԿԱՄ ՍԻՆԱԼ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

92. Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից սույն հրահանգի II և III բաժիններում թվարկված ֆիզիկական անձանց ամսական հարկվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները կարող են պահվել աշխատողներից ոչ ավելի քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի գանձված գումարները հաշվանցվում են առաջիկա վճարումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում` սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք տարիների համար:

Օրինակ 1. Հոկտեմբերի 10-ին կատարված ստուգմամբ բացահայտվել է, որ վերջին երեք ամիսների համար աշխատողից չի պահվել 120 դրամ: Այդ գումարը ենթակա է պահման հավասար մասերով, այսինքն 40-ական դրամի չափով, հոկտեմբերի առաջին կեսի, նոյեմբերի առաջին կեսի, և դեկտեմբերի առաջին կեսի աշխատավարձը վճարելիս:

Օրինակ 2. Հոկտեմբերի 10-ին կատարված ստուգմամբ բացահայտվել է նաև, որ աշխատավարձից չի պահվել հարկ` փետրվարին` 40 դրամ, մարտին` 40 դրամ և ապրիլին` 40 դրամ: Հարկի այդ գումարը (120 դրամ) աշխատողից գանձման ենթակա չէ, քանի որ չպահվելու փաստը բացահայտվելու օրվանից անցել է ավելի քան երեք ամիս:

93. Սույն հրահանգի IV-VII բաժիններում թվարկված ֆիզիկական անձանց կողմից ավել վճարված կամ սխալ հաշվարկման հետևանքով ավել գանձված հարկի վերադարձումը կատարվում է այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում` սահմանված չափից ավելի վճարման օրվան հաջորդող երեք տարիների համար:

Սահմանված չափից ավելի վճարված գումարները վերադարձնելու մասին վճարողի դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը:

94. Հարկի վճարումից վճարողի խուսափելու հետևանքով չգանձված հարկի գումարները գանձվում են խուսափելու ամբողջ ժամանակի համար:

Եկամտի վճարման աղբյուրի մոտ ժամանակին չպահված կամ բյուջե չփոխանցված հարկի գումարները հարկային մարմնի կողմից գանձվում են քաղաքացիներին այդպիսի եկամուտներ վճարող ձեռնարկություններից, հիմնարկներից և կազմակերպություններից անվիճելի կարգով՝ ամբողջ ժամանակաշրջանի համար:

ԲԱԺԻՆ XIII

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

95. Հարկի հաշվարկման ճշտության, ժամանակին բյուջե վճարման և հարկման գործող կարգի պահպանման համար պատասխանատվությունը դրվում է հարկ վճարողների և ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների պաշտոնատար անձանց վրա:

96. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ձեռնարկություններից, հիմնարկներից, կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից գանձվում է տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,5 տոկոսի չափով:

97. Սույն հրահանգի IV-VI բաժիններում թվարկված այն վճարողները, որոնք մինչև հարկի վճարման համար սահմանված ժամկետները համապատասխան ժամանակամիջոցի համար սահմանված դեպքերում չեն ներկայացրել հայտարարագրեր, վճարում են նախորդ ժամանակամիջոցի եկամտի, իսկ դրա մասին տվյալների բացակայության դեպքում՝ ընթացիկ տարվա ենթադրվող եկամուտների հիման վրա հաշվարկված հարկի գումարի 110 տոկոսը:

Հայտարարագիրը ներկայացվելուց հետո կատարվում է հարկի վերահաշվարկ:

Եկամուտների և ծախսերի մասին հայտարարագրերը սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում վճարողից գանձվում է տույժ 2 ամիսը գերազանցող յուրաքանչյուր օրվա համար՝ հարկի գումարի 5 տոկոսի չափով:

98. Հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումով վարելու, հաշվարկները, հայտարարագրերը և օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերը սխալ կազմելու համար վճարողը բյուջե է մուծում տուգանք՝ հարկի գումարի 10 տոկոսի չափով:

99. Եկամուտների հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ վարելը կամ եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը, ժամանակին չներկայացնելը կամ հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, եկամուտը կամ հարկվող այլ օբյեկտ թաքցնելը, հարկը վճարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելը առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն:

100. Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու համար վճարողներից (սույն հրահանգի IV-VI բաժիններում թվարկված) գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված օբյեկտի համար նախատեսված հարկի ամբողջ գումարը, ինչպես նաև տուգանք այդ գումարի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում մեկից ավելի խախտումների դեպքում՝ տուգանքի այդ գումարի կրկնակի չափով:

Թաքցված կամ պակաս ցույց տրված են համարվում հարկվող այն օբյեկտները, որոնք ցույց չեն տրվել հարկային մարմիններին ներկայացված հայտարարագրերում:

Թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի, ինչպես նաև տուգանքի գումարը բյուջե է մուծվում վճարողների տրամադրության տակ մնացող եկամտի հաշվին:

101. Արտարժույթով ստացված եկամուտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում եկամտի գումարը վերահաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի արժույթային կուրսով:

102. Վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև սույն բաժնի 96, 97, 98 կետերով նախատեսված տույժերը և տուգանքները բյուջե են մուծում հարկային մարմինների կողմից համապատասխան ակտ (արձանագրություն) կամ նամակ-պահանջագիր (ծանուցագիր) ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում: Սահմանված ժամկետներում չմուծված հարկի գումարները, տույժերը, ինչպես նաև հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար տուգանքը հարկային մարմինների կողմից անվիճելի կամ դատական կարգով բռնագանձվում են այդ ամբողջ ժամանակամիջոցի համար:

103. Հայտարարագրերը, հաշվարկները և օրենսդրությամբ նախատեսված մյուս փաստաթղթերը ոչ ժամանակին ներկայացնելու և սխալ կազմելու, հարկերի գումարները ոչ լրիվ, ոչ ժամանակին պահելու և բյուջե փոխանցելու, ինչպես նաև իրենց կողմից ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին ու քաղաքացիներին կատարված վճարումների վերաբերյալ սահմանված կարգով և ժամանակին տեղեկություններ չներկայացնելու համար պատասխանատու պաշտոնատար անձինք ենթարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

ԲԱԺԻՆ XIV

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄԸ

104. Հարկը գանձելիս հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կարող է գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք: Գանգատները քննության են առնվում և դրանց առթիվ որոշումներ են կայացվում ոչ ուշ, քան գանգատը ստացվելու օրվանից 30 օրվա ընթացքում: Այդ որոշումները կարող են գանգատարկվել վերադաս հարկային մարմին կամ դատարան՝ գանգատարկողին որոշման կրկնօրինակը հանձնելու օրվանից մեկամսյա ժամկետում:

105. Հարկային մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունների գանգատարկումը, որոնք կապված են վարչական տուգանք նշանակելու հետ, կատարվում են վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

106. Հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը չի դադարեցնում հարկերի գանձումը: Գանգատը քննության առնող մարմինը իրավունք ունի մինչև գանգատի լուծումը դադարեցնել հարկի գանձումը:

Հավելված 1
ՀՀ ՀՊՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Ց Ա Ն Կ

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ԶՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կարմիր խաչի ընկերություն
Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միություն
Հայ գրողների միություն
Հայաստանի գրողների միություն
Հայաստանի երաժշտական ընկերություն
Հայաստանի նկարիչների միություն
Հայաստանի ժուռնալիստների միություն
Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն
Հայաստանի թատերական գործիչների միություն
Հայաստանի ճարտարապետների միություն
Գյուտարարների և ռացիոնալիզատորների ընկերություն
Հայաստանի դիզայներների միություն
Մշակույթի հայկական ֆոնդ
Հայաստանի մտավորականության սոցիալական պաշտպանության հիմնադրամ
Հաշմանդամների հայկական ընկերություն
«Գթություն» բարեգործական միություն
Հայաստանի խաղաղության ֆոնդ
Հայաստանի գիտնականների միություն
«Արցախ» հայրենակցական բարեգործական միություն
Աֆղանական պատերազմի մասնակիցների հայկական հանրապետական ընկերություն
ՀՀ և Արցախի պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների միություն
Հայաստանի պետական սիմֆոնիկ և երևանի երիտասարդական ֆիլիարմոնիկ
նվագախմբերի բարեկամների միություն
ՀՀ «Զինվորների ծնողների» կոմիտե
«Ծնողագուրկ երեխաների հիմնադրամ» բարեգործական կազմակերպություն
Գ.Նարեկացու անվան հայկական մանկական ֆոնդ
Հայաստանի մանկական ֆոնդ
«Դինամո» մարզական ընկերություն
Պաշտպանական, մարզատեխնիկական միություն
«Նոյի տապան» բժշկական-սոցիալական զարգացման բարեգործական ֆոնդ
Հայաստանյազ առաքելական եկեղեցին՝ իր ավանդական կազմակերպություններով
հանդերձ
Կրոնական այլ կազմակերպություններ
Սոցիալական ապահովագրության ֆոնդ
«Սևան» գյուղական մարզական ընկերություն
«Աշխատանքային ռեզերվներ» մարզական ընկերություն
Արհմիությունների կամավոր մարզական ընկերություն
Կույրերի միություն
Խուլերի միություն
Համրերի միություն
«Զորավար Անդրանիկ» ՀՀՄ
«Ապավեն» գթության և առողջության հայկական ֆոնդ
Հայ ընտանիքի աջակցության միություն
Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն
Համահայկական շախմատի «Նավակ» բարեգործական ֆոնդ

Տեղեկանք

Տրվում է քաղաքացի (ուհի)

_____ (ազգանուն, անուն, հայրանուն)

Մշտական բնակության հասցեն

_____ (բնակության վայրը, փողոցը, տունը, բնակարանը)

որ 0ա 199 թ. «___» «_____»-ի դրությամբ իր խնամառության տակ
ուճի հետևյալ անձինք. _____

NN Ազգանուն, անուն, հայրանուն

Ազգակցական կապը

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.

Տեղեկանքը տրվում է հարկման ենթակա եկամուտներից պակասեցումներ կատարելու
նպատակով:

ԲՀՏ-ի պետ
(Յճային կատարիչ) _____

_____ (ազգանուն, անուն, հայրանուն)

(ստորագրություն)

«___» «_____» 199 թ.

Կճիքը

_____ հարկային պետական տեսչություն

Տեղեկություններ

199 թ. քաղաքացիներին վճարված հեղինակային
վարձատրությունների մասին

199 թ. ընթացքում ներթուշված քաղաքացիներին տրվել են հեղինակային
վարձատրություններ և պահվել հարկեր հետևյալ չափերով.

Խ/Խ.	Գեղինակի (Ժառանգների, իրավահաջորդների) ազգանուն, անուն, հայրանուն	Մշտական բնակության հասցեն	Գաշվարկված եկամտի գումարը (դրամ)	Պահված հարկի գումարը (դրամ)
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				
5.				

«___» _____ 199 թ.

Կճիքը

գլխ. հաշվապահ _____

/Ա.Ա.Գ./

_____ (ստորագրություն)

ԿԱԴՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՇՎԻ ԵՆ ԱՌԼՎՈՒՄ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵԿՎԱՍԻ ՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտների ստացմանն առնչվող ծախսերի կազմում ընդգրկվում են (մտցվում են).

- սյուլթական ծախսերը (հումք, սյուլթեր, կիսաֆաբրիկատ և այլն),
- աշխատանքի վարձատրման ծախսերը (այդ թվում` բնամթերային ձևով կատարված վճարները)` ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում,
- պետական սոցիալական և բուժապահովագրության վճարումները,
- հիմնական արտադրական ֆոնդերի լրիվ վերականգնման համար կատարվող ամորտիզացիոն մասհանումները,
- վարձակալական վճարները,
- գույքի պարտադիր ապահովագրման վճարումները,
- կարճաժամկետ վարկերի դիմաց տոկոսների վճարումները (բացի ժամկետանց և տարկետված վարկերի),
- արտադրանքի արտադրության և իրացման մյուս ծախսերը (ներառյալ հիմնական արտադրական ֆոնդերի բոլոր տեսակի նորոգման ծախսերը), այդ թվում`
 - ա) կոմիսիոն մասհանումների գումարները (այն դեպքում, երբ արտադրանքը հանձնվում է կոմիսիոն խանութներ և այլ առևտրական կազմակերպություններ վաճառքի համար),
 - բ) արտադրվող արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գովազդային ծախսերի գումարները,
 - գ) հակահրդեհային և պահակային պահպանության վճարները,
 - դ) կապի և հաշվողական կենտրոնների կողմից կատարված ծառայությունների դիմաց վճարված գումարները,
 - ե) ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ուղևորությունների (գործուղումների) ծախսերի գումարները, այդ գործունեությունից ստացվող համախառն եկամտի 1 տոկոսից ոչ ավելի,
 - զ) ոչ սյուլթական ակտիվների մաշվածությունը:
- Ոչ սյուլթական ակտիվներին են պատկանում հողի, ջրի և բնական այլ ռեսուրսների, շենքերի և սարքավորումների օգտագործման իրավունքի, ինչպես նաև ուրիշ գույքային իրավունքների արժեքը, այդ թվում մտավոր սեփականությունը: «Ոչ սյուլթական ակտիվներ» հոդվածով ծախսերը թույլատրվում է հանել համախառն եկամտից մաշվածքի չափով, որը հաշվարկվում է ելնելով նրանց սկզբնական արժեքից և օգտակար գործունեության ժամկետից.
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան ոչ սյուլթական ակտիվների օգտագործման հետ կապված բոլոր տեսակի մուծումները,
- արտադրանքների սերտիֆիկացման աշխատանքների, խորհրդատվական և լրատվական ծառայությունների համար ծախսերը,
- մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները` ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Հավելված 6
ՀՀ ՀՊՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Տեղեկություններ

199 թ. քաղաքացու վճարված եկամուտների գումարների մասին.

1. Եկամուտներ վճարած ձեռնարկության, կազմակերպության, հիմնարկի անվանումը

2. Ձեռնարկության, կազմակերպության, հիմնարկի հասցեն և հաշվապահի հեռախոսահամարը

3. Եկամուտ ստացող քաղաքացու ազգանուն, անուն, հայրանունը

4. Մշտական բնակության վայրը, անձնագրային տվյալները

5. Ինչ գործունեության (աշխատանքի, ծառայության) և որ ժամանակաշրջանի համար է կատարվել եկամտի վճարումը

6. Վճարումների ամսաթիվը

7. Վճարված եկամուտների գումարը (դրամով)

8. Կոմիսիոն և առևտրական կազմակերպություններին վճարված գեղչի (վերադիրի) գումարը

9. Եկամտի գումարը, որից հաշվարկվել է հարկը (դրամ)

10. Պահված հարկի գումարը (դրամ)

«----» «-----» 199 թ.

(Տեղեկություններ տվող անձի ազգանուն, անուն, հայրանունը)

(ստորագրությունը) Սերիա _____

Կնիքը

Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչություն

Վճարման
 _____ համար _____
 ծանուցագիր

Սերիա

Շրջան(քաղաք) _____
 հասցեն՝ _____

Վճարման ծանուցագիր N _____
 (անձնական հաշվի)

N _____
 (անձնական հաշվի)

Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտային հարկի մասին

ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտային հարկի մասին

"____" _____ 1999 թ. համար _____-ին

(Վճարողի ազգանուն, անուն, հայրանունը)

«—» _____ 1999 թ.

Հայաստանի Հանրապետության 1995թ. փետրվարի 8-ի «Եկամտահարկի մասին» օրենքի հիման վրա Դուք պարտավոր եք վճարել՝

	Լրացուցիչ վճար ըստ վերահաշվարկի 199--թ. համար, ենթակա է վճարման ոչ ուշ 199 --թ.	Ընթացիկ կանխավճարներ ըստ վճարման ժամկետների			Ընդամենը ենթակա է վճարման ընթացիկ տարում
		Ժամկետներ			
		մինչև մայիսի 15-ը	մինչև օգոստոսի 15-ը	մինչև նոյեմբերի 15-ը	
հաշվարկված է	x				
հաշվի է առնված ըստ վերահաշվարկի	x				
ապառք 199--թ համար	x				
այդ ապառքի տույժը առ (ամիս, ամսաթիվ)	x				
ենթակա է վճարման	x				

Ստացա
 «—» _____ 1999-թ.
 «—» _____
 (ամիս, ամսաթիվ) կնիք

Հարկային պետական տեսչության պետ՝ _____

(վճարողի ստորա- (ստորագրություն) գրությունը)

Հարկի հաշվարկը

Եկամտի աղբյուրի անվանումը _____

Ընթացիկ տարվա հարկը հաշվարկելու համար ընդունված եկամուտը _____ դրամ

Ընթացիկ տարվա հարկի գումարն ըստ օրենքի հոդվածների դրույթաչափերի _____ դրամ

Հարկային պետական տեսչության տեսուչ՝

 (ստորագրություն)

Ծանոթություն. - Վճարումը ուշացնելու դեպքում գանձվում է տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկի գումարի 0,5% չափով:

հարկային պետական տեսչությանը

Դիմում

Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն չունեցող անձանց եկամուտներից վճարման աղբյուրի մոտ պահված հարկի գումարի վերանայման մասին

1. Դիմողի ազգանուն, անուն, հայրանունը _____
 2. Դիմողի մշտական բնակության վայրի երկիրը և հասցեն _____
 3. Խնդրում եմ կատարել հարկի գումարի ճշտում, որը պահվել է եկամտի վճարման աղբյուրի մոտ
(նշվում է ստացված եկամտի տեսակը) _____
 4. Եկամուտը վճարող ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության անվանումը և փոստային ստույգ հասցեն _____
 5. Եկամտի վճարման ամսաթիվը _____
 6. Եկամտի գումարը մինչև հարկի պահումը _____
 7. Պահված հարկի գումարը _____
- Նշված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ _____
- «—» , ——— 199 թ. (ստորագրություն)

Հավելված 10
ՀՀ ՀԴՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Հաշվարկ

1. Եկամտի ընդհանուր գումարը _____
 2. Ծախսերի ընդհանուր գումարը _____
 3. Հարկման ենթակա եկամտի պակասեցման ընդհանուր գումարը _____
 4. Հարկվող եկամտի գումարը
(տող 1 - տող 2 - տող 3) _____
 5. Հարկի գումարը _____
 6. Պահումներ վճարման աղբյուրի մոտ _____
 7. Ենթակա է վերադարձման _____
- Հարկային աշխատողի ստորագրությունը _____

«—» , ——— 199 թ.

Հավելված 11
ՀՀ ՀԴՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Դիմում

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ֆիզիկական անձանց հարկերից ազատելու (վերադարձնելու) մասին

1. Ազգանուն, անուն, հայրանուն

մշտական բնակության վայրի երկիրը և հասցեն այդ երկրում
Հայաստանի Հանրապետության և

_____ կողմից
(երկրի և համաձայնագրի լրիվ անվանումը)

« » _____ 199 թ. Հայաստանի Հանրապետությունում ինձ հասանելիք եկամտի վճարման
ժամանակ ստացված _____

(նշվում է գործունեության տեսակը)

եկամուտը _____

(եկամտի գումարը)

Խնդրում եմ թույլատրեք վճարելու ինձ հասանելիք եկամուտը (պետք է ընդգծել)

1. Առանց հարկը պահելու
2. ՀՀ-ում վճարման ենթակա հարկերի չափի պակասեցումով
3. ՀՀ-ում վերադարձնել պահված հարկը

Լրացման ամիս ամսաթիվը և վայրը

Իրավասու մարմինը _____

(երկրի անվանումը, իրավասու մարմինը)

հաստատում է.

1. Դիմողը իրոք ունի մշտական բնակության վայր

(երկրի անվանումը)

ՀՀ և այդ երկրի միջև կնքած համաձայնագրերի իմաստով _____

(համաձայնագրի լրիվ անվանումը)

2. Դիմողի եկամուտը, որը ենթակա է ստացման ՀՀ-ից

ա) ենթակա է հարկման _____

(երկրի անվանումը)

բ) պահվում է մասնակի

_____ (ամսաթիվը և լրացման վայրը)
(ստորագրություն)

կնիքը

ՀՀ հարկային մարմնի նշումը.
Հաստատվում է, որ տվյալ դիմումում նշվածը համապատասխանում է համաձայնագրի դրույթներին Հայաստանի Հանրապետության և

(երկրի և համաձայնագրի լրիվ անվանումը)

«__» _____ 199 թ. և այն.

1) Դիմողի կողմից նշված եկամտից հասանելիք հարկի գումարը կազմում է.

(գումարը թվերով և տառերով)

2) Գումարը ենթակա է հետ վերադարձման ՀՀ-ում

(գումարը թվերով և տառերով)

3) Հարկ չի պահվում

Հարկային տեսչության պետ՝

«—» _____ 199 թ.

կնիք

(ստորագրություն)

Ծանոթություն. 1. Դիմումը լրացվում է երեք օրինակից և հաստատվում է մշտական բնակության վայրի երկրի իրավասու մարմնի կողմից: Որից հետո դիմումի երկու օրինակը ներկայացվում է եկամտի վճարման տեղի ՀՀ հարկային մարմնին: Հարկային մարմինը ստուգելով դիմումում նշվածի համապատասխանությունը տվյալ երկրի համաձայնագրի դրույթների հետ, երկու օրինակում կատարում է համապատասխան նշումներ և մեկ օրինակը վերադարձնում է դիմողին: Մյուս օրինակը հարկային մարմինը ուղարկում է շրջանային (քաղաքային) ֆինանսական վարչություն, նշված գումարը բյուջեից հետ վերադարձնելու համար:

2. Սույն դիմումում բոլոր դրամական միջոցները նշվում են վճարման տարադրամով:

3. Դիմումը կարող է ներկայացնել ոչ միայն եկամուտ ստացողը, այլ նաև նրա կողմից լիազորված անձը: Այդ դեպքում դիմում ներկայացնողը պետք է ներկայացնի համապատասխան ձևով ձևակերպված լիազորագիր:

Հավելված 12
ՀՀ ՀՊՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Դիմում

Խնդրում եմ Ձեզ ԲԲ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկման ենթակա իմ եկամուտներից կատարել պակասեցումներ հետևյալ երեխաների և խնամառուների համար.

NN	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան տարեթիվ, ամսաթիվը	Ազգակցական կապը	Ուսումնական հաստատությունը (ցերեկային ամիս, ուսուցման ուսանողների եվ սովորողների համար)
----	----------------------------	---------------------------	-----------------	---

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.
- 6.
- 7.
- 8.
- 9.
- 10.

- Կից ներկայացվում են.
1. ԲՇՏ-ի կողմից տրված տեղեկանքը խնամառուների առկայության վերաբերյալ
 2. Երեխաների (երեխայի) ծննդյան վկայականների պատճենները
 3. Ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը երեխաների (երեխայի) ցերեկային բաժնում սովորելու վերաբերյալ:

« » _____ 199 թ.

(ստորագրություն)

Հավելված 13
ՀՀ ՀՊՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Ակտ

Քաղաքացիների աշխատանքի վարձատրությունից (եկամուտներից) հարկերի ճիշտ պահումների, լրիվ և ժամանակին բյուջե փոխանցման ստուգման.

Ստուգումը կատարված է 199 թ. _____ « »-ին

(ստուգողի անուն ազգանուն հայրանուն, պաշտոնը, ?ՊՑ-ի անվանումը)

1. Ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության լրիվ (առանց կրճատման) անվանումը, հասցեն և ենթակայությունը	
2. Ստուգվող ժամանակաշրջանում հաշվարկված հարկերը և պահված գումարը բյուջե փոխանցելու աշխատանքի համար պատասխանատու անձի պաշտոնը, ազգանունը և հեռախոսի համարը	
3. Ստուգվող ժամանակաշրջանում աշխատանքի վարձատրություններից (եկամուտներից) հարկերի հաշվարկումով զբաղվող անձի պաշտոնը, ազգանունը, հեռախոսի համարը	
4. Ստուգման ժամանակ ներկա էին (պաշտոնը, ազգանունը, հեռախոսի համարը)	
5. Երբ և որ ժամանակաշրջանի համար է կատարվել նախորդ ստուգումը	199 թ.-----«--»-ից մինչև 199 թ.-----«--»
6. Արդյոք կատարվել են նախորդ ստուգման վերաբերյալ առաջադրանքները և վերացվել են արդյոք նախորդ ստուգմանը արձանագրված թերությունները	
7. Կատարվել են արդյոք սույն հրահանգի հիմք աղվելված -ի պահանջները՝ այլընտրանքայիններին վճարված գումարների մասին հայտնվել են համապատասխան հարկային պետական տեսչություններին, թե ոչ	
8. Դարկերի ճիշտ պահման, ժամանակին և լրիվ բյուջե փոխանցման ստուգումը կատարվել է.	199 թ.-----«--»-ից մինչև 199 թ.-----«--»-ն ընկած ժամանակաշրջանի համար

9. Ստուգման ընթացքում սահմանվել է

Բանվորների և ծառայողների անձնական հաշիվների ընդհանուր թիվը	
Ինչպիսի ստորաբաժանումների գծով է (ցեխ, բաժին, վարչություն և այլն) ստուգվել աշխատողների անձնական հաշիվները	
Ստուգված անձնական հաշիվների քանակը	

Դարկերի ոչ ճիշտ հաշվարկներ են կատարվել հետևյալ դեպքերում. (դրանով)

Աշխատողի ազգանունը անունը, հայրանունը	ամսվա անվանումը	վաստակի գումարը	եկամտային հարկ				հարկերի սխալ պահելու պատճառները
			ենթակա	պահված էր	ավելի	պակաս	
1	2	3	4	5	6	7	8
ընդամենը							

Ծանոթություն - բանվորների կամ ծառայողների հարկերի սխալ հաշվարկման մի քանի փաստերի հայտնաբերման (շատ թվով աշխատողների) դեպքում, այս նույն ձևով առանձին թղթի վրա կազմվում է լրացուցիչ ցուցակ:

10. Արդյոք եղել են աշխատողներին հարկի գումարների վերադարձման փաստեր, ինչով է այն պայմանավորված, քանի դեպքով և ճիշտ է արդյոք կատարված վերադարձը. _____

11. Պահված հարկերի ճիշտ, լրիվ և ժամանակին բյուջե փոխանցման ստուգման ժամանակ 199թ. _____-ից մինչև _____ը պարզվել է

(Մախրոդ ստուգման պահը)
 հետևյալը՝

	մնացորդը առ- -----	հարկերի պահված գումարը	բյուջե փոխանցված հարկերի գումարը	(դրամ) բյուջեի պարտքի գումարը
Եկամտային հարկ				

Ծանոթություն-Պահված և փոխանցված հարկերի գումարները ցույց են տրվում ստուգվող ամբողջ ժամանակաշրջանի համար տարբերությունների առկայության դեպքում հարկերը ժամանակին բյուջե չփոխանցելու յուրաքանչյուր դեպքի գծով կազմվում է մանրամասն հաշվարկ տույժի հաշվարկմամբ: Հարկերը բյուջե փոխանցելու մասին տեղեկությունները համեմատվում են հարկային մարմնի հաշվառման տվյալների հետ: Անհրաժեշտության դեպքում կցվում է ըստ ամիսների պահված և փոխանցված հարկերի մասին տեղեկանքը:

12. Հարկային օրենսդրության պահպանման գծով ստուգողի այլ դիտողությունները և առաջարկությունները _____

Ստուգողի ստորագրությունը

Ստուգմանը մասնակցել են

Ստուգման ակտի հետ ծանոթացել ենք.

Ձեռնարկության (հիմնարկի, կազմակերպության) տնօրեն _____

գլխավոր հաշվապահ _____

Ստուգման արդյունքների գծով հարկային պետական տեսչության բաժնի պետի դիտողությունները և եզրակացությունը.

(ամսաթիվ)

(ազգանուն, անուն, ստորագրություն)

Ստուգման արդյունքների գծով հարկային պետական տեսչության պետի (ղեկավարի) որոշումը.

(տեսչության անվանումը)

հարկային պետական տեսչության պետ՝

(ազգանուն, Ա.Յ., ստորագրություն)

« » ----- 199 թ.

Հավելված 14
ՀՀ ՀՊՏ 1995թ. ապրիլի 11-ի
N 0991/3-4 հրահանգի

Ակտ

Ձեռնարկատիրական (առևտրային) գործունեությամբ զբաղվող, ինչպես նաև ՀՀ «Եկամտահարկի մասին» օրենքի 4-րդ գլխում նախատեսված հարկման ենթակա այլ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց գործունեության գծով հարկային մարմիններին այդ անձանց կողմից եկամուտների մասին ներկայացված հայտարարագրերում ցույց տրված տվյալների լրիվության և ճշտության ստուգումների.

Ստուգումը կատարված է

(ստուգողի ազգանունը, պաշտոնը և հարկային մարմնի անվանումը)

Ստուգումը կատարվել է.
 ա) Քաղաքացի (ուհի) _____ ի կողմից 199 թ.
 (ազգանուն, անուն, հայրանուն)

Եկամուտների մասին հարկային մարմնին ներկայացված հայտարարագրում ցույց տրված տվյալների լրիվության և ճշտության մասին
 բ) քաղաքացի(ուհի) _____ ի գործունեության
 (ազգանուն, անուն, հայրանուն)

ստուգման ժամանակ ներկա էին

(ստուգման մասնակցողների ազգանուն անուն հայրանուն, պաշտոնները)

Ստուգումը անց է կացվել 199 թ. _____ « _____ »-ից 199 թ. _____-ը ընկած ժամանակաշրջանում ստացված եկամուտների համար.
 Ստուգմամբ արձանագրվել է հետևյալը՝

1. Փաստացի իրականացվող գործունեության տեսակը. համապատասխանում է արդյոք այդ գործունեությունը զրանցման վկայականում և եկամուտների մասին ներկայացված հայտարարագրում նշվածին

2. Գործունեություն իրականացնելու հիմքը

(փաստաթուղթը տվող կազմակերպության անվանումը և փաստաթղթի անվանումը, որով իրականացնում է գործունեությունը)

3. Փաստացի ժամանակաշրջանը, որում իրականացվել է գործունեությունը, գործունեության իրականացման վայրը _____

4. Եկամտի առաջացմանը մասնակցել են.

Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆիմնական աշխատանքի վայրը	Գործունեության մասնակցելու ժամանակահատվածը	Ստացված եկամտի գումարը
Կոլեկտիվի անդամները			
այլ քաղաքացիներ, որոնց հետ կնքվել են պայմանագրեր իրենց աշխատանքի օգտագործման վերաբերյալ			

5. Նշված ժամանակաշրջանում արտադրվել է արտադրանք՝

արտադրանքի անվանումը	չափի միավորը	քանակը

6. Ստուգվող ժամանակաշրջանում իրացվել է արտադրանք (մատուցվել է ծառայություն).

Արտադրանքի անվանումը, կատարված աշխատանքի (ծառայության) տեսակը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը (դրամով)
ընդամենը			
ընդամենը եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի տվյալներով			
տեղեկություններ հայտարարագրում նշված եկամուտների մասին			

Տարբերությունների առկայության դեպքում պարզել պատճառները _____

7. Ստուգմանը ընդգրկված ժամանակահատվածում անմիջականորեն եկամուտներ ստանալու հետ կապված ծախսերը.

ծախսերի հոդվածները	չափի միավորը	քանակը	(դրամով)
			գումարը (դրամ, լումա)
ընդամենը			
ընդամենը եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի տվյալներով			
եկամուտների մասին հայտարարագրում նշված տեղեկություններ			

Տարբերությունների առկայության դեպքում պարզել պատճառները _____

8. Հարկման ենթակա եկամուտների գումարը.

համախառն եկամտի գումարը	ծախսերի գումարը	(դրամով)
		եկամուտների գումարը, որը ենթակա է հարկման
եկամուտների և ծախսերի հաշվառման գրքում ցույց տրված եկամուտների գումարը		
հայտարարագրում նշված եկամուտների գումարը		

Կատարված ստուգման արդյունքներով հարկման համար ընդունվում է զուտ եկամուտը գումարով _____ դրամ հետևյալ պատճառներով

9. Գարկման ենթակա եկամուտների պակասեցման համար առկա իրավունքը. _____

(հիմնական աշխատանքի վայրի բացակայությունը, երեխաների և խնամառուների առկայությունը)

10. Աշխատանքային պայմանագրով (քաղաքացիա-իրավական պայմանագրով, միանվագ աշխատանքների համար) աշխատող քաղաքացիներին վճարված աշխատավարձից եկամտահարկի պահումների ճշտությունը

Ազգանուն, անուն, հայրանուն	հիմնական աշխատանքի վայրը	աշխատանքի ժամանակահատվածը	վճարված աշխատավարձի գումարը	պահված հարկերի գումարը	պետք է պահվեր	տարբերություն (+/-)

11. Ստուգմամբ արձանագրված այլ խախտումներ _____

12. Ստուգողի բացատրությունները ըստ էության եկամուտների և ծախսարի կազմում սահմանված տարբերությունների, ինչպես նաև հարկային օրենսդրության խախտումների մասին

« » _____ 199 թ.

(ստուգողի ստորագրությունը)

(ստուգողի ստորագրությունը)

Ստուգման արդյունքների գծով հարկային պետական տեսչության բաժնի պետի դիտողությունները և եզրակացությունները _____

« » _____ 199 թ.

(Ա.Ա.Գ. և ստորագրություն)

Ստուգման արդյունքների գծով հարկային պետական տեսչության պետի որոշումը _____

(տեսչության անվանումը)

ԳՊՏ պետ՝

(Ա.Ա.Գ. և ստորագրություն)

« » _____ 199 թ.